Kingdom of the Netherlands

Վանանի
սոցիալ-հոգեբանական կենտրոն ՀԿ

ՀՄԿ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ

ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԳԵՆԴԵՐ ԵՎ ՀՈՒՅԶ



ՁԵՌՆԱՐԿ

մանկավարժների և հոգեբանների համար

ԳՅՈՒՄՐԻ

ԷԼԴՈՐԱԴՈ ՊՐԻՆՏ
2025

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԳԵՆԴԵՐ ԵՎ ՀՈՒՅԶ

ՁԵՌՆԱՐԿ

մանկավարժների և հոգեբանների համար

ԳՅՈՒՄՐԻ
ԷԼԴՈՐԱԴՈ ՊՐԻՆՏ
2025

ՀՏԴ 316.6:37.06(07)
ԳՄԴ 88.5+74.00g7
Խ 963

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի նոյեմբերիի 29-ի N2271-Ա/2 հրամանի համաձայն «Գենդերային կարծրատիպերի հաղթահարումը ապահով և անվտանգ կրթական միջավայրի ստեղծման համատեքստում. հույզեր և գենդեր» ձեռնարկը երաշխավորվել է գործածության որպես ուսումնական նյութ։

Մասնագիտական խմբագիր՝ Լիլիթ Մնացականյան
Հեղինակներ՝ Անի Խուդոյան
Հայկուհի Ադամյան
Խմբագիր՝ Հայկանուշ Սարգսյան
Գրաֆիկական ձևավորում ՝ Միլենա Հովհաննիսյան

Խուդոյան Ա. Ս., Ադամյան Հ. Ա.,
Խ 963 Գենդերային կարծրատիպերի հաղթահարումը ապահով և անվտանգ կրթական միջավայրի ստեղծման համատեքստում. գենդեր և հույզ ձեռնարկ մանկավարժների և հոգեբանների համար. - Եր.։ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, «Կանանի» սոցիալ-հոգեբանական կենտրոն ՀԿ, 2024. - 72 էջ։

Ձեռնարկը պատրաստվել է Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան աջակցությամբ իրականացվող «Սոցիալականացում առանց խտրականության. առողջ հույզերի և հավասար հարաբերությունների խթանում» ծրագրի և ՀՀ ԿԳՄՍՆ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի և «Կանանի» սոցիալ-հոգեբանական կենտրոն ՀԿ-ի միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակում։

Բովանդակությունն արտահայտում է հեղինակների տեսակետները, որոնք կարող են չհամընկնել Նիդերլանդների Թագավորության դեսպանատան և այլոց մոտեցումներին։

ՀՏԴ 316.6:37.06(07)
ԳՄԴ 88.5+74.00g7

ISBN 978-9939-978-06-2
© «Կանանի» ՀԿ, 2025
© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն (ՀՄԿ) ՊՈԱԿ, 2025
© «ԷԼԴՈՐԱԴՈ ՊՐԻՆՏ» ՍՊԸ, 2025

Նյութը վերահրատարակելու, կրկնօրինակելու, տպագրելու կամ թարգմանելու ցանկության դեպքում անհրաժեշտ է ձեռք բերել «Կանանի» սոցիալ-հոգեբանական կենտրոն ՀԿ-ի և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (ՀՄԿ) գրավոր թույլտվությունը՝ հարցում ուղարկելով հետևյալ հասցեներին.
«Կանանի» ՀԿ, էլ. հասցե՝ info.kanani.ngo@gmail.com
ՀՄԿ, Քաջազնունի 12, Երևան 0070, էլ. հասցե՝ hmkentron.yerevan@gmail.com

Instagram Facebook

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում որակյալ, ներառական, բազմակողմանի, թե՛ աղջիկների և թե՛ տղաների զարգացմանը նպաստող կրթության ապահովումը մնում է առաջնահերթ և արդիական խնդիր:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածը սահմանում է, որ երեխայի իրավունքների և ազատությունների իրացումը պետք է ապահովվի յուրաքանչյուր երեխայի համար, «...առանց որևէ խտրականության, անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքից...»[1]: Հոդված 18-ն ուղղված է ծնողների ավելի հավասարակշռված դերին ընտանիքում և երեխաների խնամքում՝ շեշտադրելով այն, որ «երկու ծնողներն էլ կիսում են իրենց երեխաներին դաստիարակելու պատասխանատվությունը և միշտ պետք է մտածեն, թե ինչն է լավագույնն իրենց երեխայի համար»:

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ անհավասարություն գոյություն ունի հասանելիության, սովորելու և հնարավորությունների մեջ: Նպատակը պետք է լինի բոլոր սեռերին տրամադրել հավասար պայմաններ, վերաբերմունք և հնարավորություններ՝ իրացնելու իրենց ներուժը, մարդու իրավունքները, արժանապատվությունը և ներդրումը տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական զարգացման մեջ: Գենդերազգայուն կրթությունն առաջնորդող հիմնարար սկզբունքներն են արդարությունը, ներառականությունը և բազմազանության նկատմամբ հարգանքը, որտեղ յուրաքանչյուր սովորող իրեն գնահատված է զգում: Այս սկզբունքներն ուղղորդում են նաև ուսուցման և ուսումնառության բոլոր գործողությունները: Կարևոր է, որ բոլոր սովորողներն ունենան հաջողության հասնելու համար անհրաժեշտ ռեսուրսներ և հավասար հնարավորություններ, անկախ սեռային պատկանելությունից:

[1] «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա», Միավորված ազգերի կազմակերպություն, 1989 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60503

Տղաներն ու աղջիկները պետք է զգան, որ իրենց ողջունում և ընդունում են անվտանգ և ապահով ուսումնական միջավայրում: Դպրոցները բռնությունից և խտրականությունից զերծ պահելու և գենդերազգայուն, բարձրորակ կրթություն ապահովելու հարցում իրենց դերն ունեն բոլորը՝ դպրոցները, մանկավարժները, սովորողները: Դրան հասնելու համար կարևոր է ունենալ խտրականությունը բացառող ուսումնական ծրագրեր և դասագրքեր, որոնք զերծ կլինեն գենդերային կողմնակալությունից և կնպաստեն հավասարությանը գենդերային հարաբերություններում: Այն, թե ինչպես են սովորողներն ընկալում իրենց և ինչպես են նախագծում իրենց դերը հասարակության մեջ, մասամբ ձևավորվում է նրանից, թե ինչ փորձառություն են նրանք ձեռք բերում դպրոցում, ներառյալ այն, թե տարբեր սեռերի ներկայացուցիչները ինչպես են ներկայացված դասագրքերում:

Չնայած գենդերային հավասարության վերաբերյալ վերաբերմունքի առումով զգալի առաջընթաց է գրանցվել ինչպես ամբողջ աշխարհում, այդպես էլ Հայաստանում, գենդերային հավասարության մի շարք խոչընդոտներ դեռևս առկա են հայկական դպրոցներում: Հայաստանում իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ թեև ուսուցիչների վերաբերմունքում նկատելի են գենդերային հավասարության և գենդերարձագանքող ուսուցման նկատմամբ դրական տեղաշարժեր, ուսուցիչները դեռևս շփոթեցնող հույզեր ունեն «գենդեր» տերմինի առնչությամբ[2]:

Իհարկե, ընտանիքներն ընկալվում են որպես գենդերային վերաբերմունք ձևավորող հիմնական դերակատարներ, սակայն ուսուցիչները կարևոր և վճռորոշ դեր կարող են խաղալ դպրոցներում գենդերային կողմնակալության կանխարգելման և նվազեցման գործում: Նվազեցնելով գենդերային կարծրատիպերը՝ գենդերարձագանքող մանկավարժությունն օգնում է երեխաներին կառուցել իրական քաղաքացիական հավասարություն, որտեղ տղամարդիկ և կանայք ապրում են համագործակցության և փոխադարձ հարգանքի պայմաններում:

Գենդերազգայուն մանկավարժությունը ոչ միայն կրթության ոլորտում գենդերային հավասարության հասնելն է, այլ նաև ուսումնական միջավայրի ստեղծումը, որն աջակցում է յուրաքանչյուր սովորողի ամբողջական զարգացմանը: Կիրառելով գենդերազգայուն մոտեցումներ՝ դպրոցները կարող են նպաստել ավելի բարեկեցիկ հասարակության և սոցիալական արդարության զարգացմանը:

Սույն ձեռնարկով մենք ցանկանում ենք խրախուսել ընթերցողներին ակտիվորեն ներգրավվել բովանդակության մեջ, կիրառել տրամադրված ռազմավարությունները և նպաստել ավելի արդար և ներառական կրթական միջավայրի ստեղծմանը, որտեղ յուրաքանչյուրն, անկախ սեռային պատկանելությունից, կունենա հավասար իրավունքներ:

[2] Գենդերային արձագանքման հարցերի շուրջ Հայաստանի միջին և ավագ դպրոցների ուսուցիչների պատկերացումները, ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ) Երևան, 2021 թվական

ՁԵՌՆԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Այս ձեռնարկը ընդգծում է կրթության կարևոր դերը գենդերային խոչընդոտները վերացնելու, կարծրատիպերը հաղթահարելու և ավելի ներառական միջավայր ձևավորելու գործում:

Ձեռնարկն ուղղված է գենդերային հավասարության կարևորության վերաբերյալ մանկավարժների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և դասավանդման ընթացքում բոլոր սովորողների համար հավասար հնարավորություններ ապահովելու կարողությունների զարգացմանը: Այն կօգնի մանկավարժներին ճանաչել գենդերային կարծրատիպերը՝ ապահովելով, որ բոլոր սովորողները, անկախ սեռային պատկանելությունից, ունենան հաջողության հասնելու հավասար հնարավորություններ:

Ձեռնարկի նպատակն է մանկավարժներին տրամադրել գործիքներ, մեթոդներ և գիտելիքներ, որոնք կօգնեն կրթական գործընթացում խթանել գենդերային հավասարությունը՝ նպաստելով դասարանում հարգանքի, արդարության և ներառականության մշակույթի զարգացմանը:

Ձեռնարկը բաղկացած է երկու հիմնական և մեկ հավելյալ բաժիններից:

1. **Տեղեկատվական մաս**
2. **Վարժությունների շտեմարան**
3. **Հավելված**

Ձեռնարկի առաջին՝ տեղեկատվական մասը ներառում է գիտելիքներ, որոնց անհրաժեշտ է տիրապետել՝ ներկայացված վարժությունները արդյունավետությամբ իրականացնելու համար: Ձեռնարկի այս մասում ուսումնասիրվում է «գենդեր» եզրույթը, ինչպես նաև գենդերազգայուն և գենդերարձագանքող մանկավարժության դերը գենդերային կարծրատիպերին արձագանքելու և դրանք հաղթահարելու գործում: Հաջորդիվ՝ ձեռնարկի երկրորդ մասում, առաջարկվում են վարժություններ՝ նախատեսված ինչպես սովորողների, այնպես էլ ծնողների/ խնամակալների համար:

Ձեռնարկի երկրորդ մասում ներկայացված վարժությունները կօգնեն մանկավարժին կամ հոգեբանին սովորողների մոտ զարգացնել այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են գենդերային կարծրատիպերի դեմ պայքարելու համար: Այս վարժությունները ուսուցիչները և հոգեբանները կարող են իրականացնել պլանավորված հանդիպումների ընթացքում: Թեև վարժություններից յուրաքանչյուրը կարող է խթանող և

օգտակար լինել սովորողների համար, և հնարավոր է դրանք կիրառել նաև մաս առ մաս, այնուամենայնիվ դրանց արդյունավետությունն առավել բարձր է, երբ դրանք օգտագործվում են ամբողջական տարբերակով:

Շտեմարանում ներառված վարժություններն ազդեցություն ունեն ինչպես դպրոցի առօրյայի, դասարանական կյանքի և սովորողների հարաբերության, այնպես էլ ընդհանրապես դպրոցի սոցիալական համակարգի վրա:

Շտեմարանում ներկայացված վարժությունները մանկավարժները և հոգեբանները կարող են իրականացնել մի շարք հանդիպումների ընթացքում՝ ձեռնարկի մեկ կամ մի քանի վարժություններ դիտարկելով որպես յուրաքանչյուր հանդիպման, քննարկման ելակետ կամ բովանդակություն: Կարևոր է նաև, որ քննարկումը սովորողներին հնարավորություն տա մեկնաբանելու, հարցնելու և անդրադառնալու իրենց սեփական փորձին: Շտեմարանի բովանդակության մի մասը կարող է քննարկվել խմբային աշխատանքների և դերախաղի, մեկ այլ մաս՝ ակտիվ վարժությունների միջոցով: Ցանկալի է, որ այս վարժությունները կիրառողները որոշակի փորձ և հեղինակություն ունենան մանկավարժական աշխատանքում:

Վարժություններում օգտագործվում են սցենարներ, դերախաղեր, հասակակիցների փոխհարաբերությունների մասին զրույցներ, գենդերով պայմանավորված կարծրատիպերի բացահայտման վերաբերյալ քննարկումներ և վերլուծություն՝ գործնականում առավելագույն հնարավորություններ ապահովելու համար: Վարժությունների հիմքում դասարանի և դպրոցի իրողություններն են, իսկ բովանդակությունը անդրադառնում է սովորողների պաշտպանության ոլորտի այն մարտահրավերներին, հնարավորություններին ու խնդիրներին, որոնք առկա են մանկավարժների աշխատանքում:

Ձեռնարկի երրորդ մասն իրենից ներկայացնում է ուսումնական ծրագրի **Հավելված** բաժինը, որում ներառված են բոլոր այն լրացուցիչ նյութերը, որոնք անհրաժեշտ են վարժությունների արդյունավետ կիրառման համար:

Անկախ նրանից՝ Դուք մանկավարժ եք,
ով ցանկանում է իր դասերն ավելի ներառական դարձնել,
դպրոցի ղեկավար, ով նպատակ ունի խթանել
դպրոցական արդար մշակույթը,թե կրթության
կազմակերպմանն աջակցող մասնագետ,այս ձեռնարկն
առաջարկում է գործնական նյութեր և
գործող ռազմավարություններ՝ աջակցելու Ձեր ջանքերին

Ձեր կատարած փոփոխությունները որքան էլ փոքր լինեն,
կարող են մեծ ազդեցություն ունենալ սովորողների
կյանքի որակի վրա:



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԱՍ

«Գենդերն այն է, թե ինչ ենք մենք զգում մեր մասին և ինչպես ենք ուզում արտահայտել, թե ով ենք մենք: Ինչպես յուրաքանչյուրն ունի իր սիրելի գույնը կամ ոճը, այնպես էլ յուրաքանչյուրն ունի ինքն իրեն հասկանալու և արտահայտելու իր ձևը»:

«Գենդեր, գենդերային՝ տարբեր սեռի անձանց ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարք, կանանց և տղամարդկանց միջև հարաբերությունների սոցիալական հայեցակետ, որն արտահայտվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ՝ քաղաքականությունը, տնտեսությունը, իրավունքը, գաղափարախոսությունը, մշակույթը, կրթությունը, գիտությունն ու առողջապահությունը»:

(Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին << օրենք, Գլուխ 1-ին, <ոդված 3, մաս 1)

Սովորողներին գենդերի գաղափարը բացատրելիս կարևոր է կիրառել մատչելի խոսք և հասկանալի օրինակներ՝ շեշտադրելով հարգանքի և ապրումակցման կարևորությունը. «Գենդերը կապված է մեր ինքնազգացողության, մտածողության և ինքնարտահայտման հետ: Օրինակ, կան աղջիկներ, ովքեր սիրում են ֆուտբոլ խաղալ, կամ տղաներ, ովքեր սիրում են խոհանոցում պատրաստել: Իսկ կմ արդյոք որևէ բան, որ դուք ցանկանում եք անել, բայց դա ավանդաբար համարվում է միայն տղաների կամ աղջիկների գործ»: Նմանատիպ օրինակները կօգնեն երեխաներին հասկանալ, որ մենք բոլորս տարբեր ենք, ունենք տարբեր նախասիրություններ, և դա նորմալ է:

Ինչ է գենդերային հավասարությունը

Բոլոր մարդիկ, անկախ սեռից, ունեն հավասար իրավունքներ, հնարավորություններ և պարտականություններ:

«Գենդերային հավասարություն՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավական կարգավիճակ և դրա իրականացման համար հավասար հնարավորություններ, որոնք հնարավորություն են ընձեռում անձանց, անկախ սեռից, ազատորեն օգտագործելու իրենց ունակությունները քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում մասնակցություն ունենալու համար»:

(Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին << օրենք, Գլուխ 1-ին, <ոդված 3, մաս 9)

Ավելի պարզ ասած՝ գենդերային հավասարությունը տարբերվելու ազատություն կամ ընտրության հնարավորություն տալու իրավունքի մասին է՝ անկախ սեռային պատկանելությունից: Մարդու իրավունքների կարևոր խնդիրներից մեկը՝ գենդերային հավասարությունը, նշանակում է հավասար լիազորություններ և մասնակցություն հանրային և մասնավոր կյանքի բոլոր ոլորտներում, ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար: Սա չի նշանակում, որ երկու սեռերը նույնն են, այլ՝ որ նրանք հավասար են իրենց իրավունքներով և արժանապատվությամբ: Ինչպես մարդու բոլոր իրավունքների դեպքում, գենդերային հավասարությունը ևս պետք է պաշտպանել և խրախուսել[3]: Միջազգային հետազոտությունները ցույց են տալիս, որ գենդերային նորմերի և գերիշխող կարծրատիպերի նկատմամբ ուսուցիչների մոտեցումն ազդում է սովորողների ուսման, ձեռքբերումների և վերաբերմունքի վրա[4]:Ուսուցիչները պետք է ճանաչեն գենդերային կարծրատիպերը և խորհեն այն մասին, թե արդյոք իրենց ուսուցման մեթոդները, ուսումնական նյութերը, լեզուն և սովորողների հետ փոխհարաբերությունները ապահովում են գենդերային հավասարությունը: Գենդերային հավասարություն ապահովելով՝ ուսուցիչները ոչ միայն խթանում են սովորողների ինքնավստահությունն ու ապրումակցումը, այլև ավելի շատ հնարավորություններ ընձեռում և օգնում նրանց դառնալ ավելի բարեկիրթ անհատներ[5]:

[3] Compassito_EN.indd, p245
[4] Գենդերարձագանքող ուսուցման գործելակերպեր. ֆոկուսխմբային քննարկումների հիմնական արդյունքները, ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ) Երևան, 2021 թվական
[5] https://www.wikihow.life/Promote-Gender-Equality-in-the-Classroom

Սովորողների հետ գենդերային հավասարության հարցը քննարկեք մարդու իրավունքների տեսանկյունից՝ ընդգծելով, որ բոլոր մարդիկ, անկախ իրենց սեռից կամ գենդերից, պետք է ունենան նույն հնարավորությունները և իրավունքները՝ առանց խտրականության:

«Մարդու իրավունքները այն հիմնարար իրավունքներն են, որոնք պատկանում են յուրաքանչյուրին՝ անկախ նրանից, թե որտեղ են ապրում, ինչ լեզվով են խոսում կամ որ սեռին են պատկանում»:

Ընդգծեք, որ բոլոր մարդիկ ունեն հավասար իրավունքներ կրթական, աշխատանքային, առողջապահական և սոցիալական պաշտպանության ոլորտներում:

- «Կանայք երբեմն նույն աշխատանքի համար ստանում են ավելի ցածր աշխատավարձ, քան տղամարդիկ, ինչը խախտում է նրանց հավասար վարձատրության իրավունքը»:
- «Որոշ երկրներում աղջիկներն ավելի քիչ հնարավորություն ունեն կրթություն ստանալու, ինչը սահմանափակում է նրանց կրթության իրավունքը»:

Կարելի է սովորողների հետ քննարկել աշխարհում տարածված գենդերային կարծրատիպերի որոշ օրինակներ.

- միևնույն աշխատանքի համար կանայք զգալիորեն ավելի քիչ գումար են վաստակում, քան տղամարդիկ,
- տղաներն ավելի շատ են ֆուտբոլ խաղում, իսկ աղջիկները՝ ավելի շատ պարում,
- տղաներն ավելի դանդաղ են ընթերցում աղջիկների համեմատությամբ,
- աղջիկներն ու տղաները չեն կարող միասին աշխատել կամ լինել ընկերներ,
- տղաները գերազանցում են բնագիտամաթեմատիկական, իսկ աղջիկները՝ հումանիտար գիտությունների բնագավառում,
- ամբողջ աշխարհում կանայք և աղջիկներն ավելի են ներգրավված տնային գործերում, քան տղամարդիկ և տղաները,
- տղաներն ավելի հաճախ են մարմնական պատժի ենթարկվում, քան աղջիկները:

Ինչ է գենդերազգայուն մանկավարժություն

Մանկավարժություն, որը ճանաչում և արձագանքում է բոլոր սովորողների տարբեր կարիքներին, փորձառություններին և հեռանկարներին՝ անկախ սեռային պատկանելությունից:

Գենդերազգայուն մանկավարժությունը այնպիսի կրթական միջավայրի ստեղծումն է, որտեղ բոլոր սովորողներն իրենց գնահատված և աջակցված կզգան, ինչպես նաև հնարավորություն կունենան իրացնել իրենց ողջ ներուժը: Ընդունելով տարբեր սեռերի սովորողների եզակի կարիքներն ու փորձառությունները՝ մանկավարժները կարող են նպաստել կրթության ավելի ներառական, արդար և արդյունավետ իրացմանը:

Գենդերազգայուն մանկավարժությունը կարևոր նշանակություն ունի այսօրվա դպրոցներում մի քանի պատճառներով.

1. **Խթանում է հավասարությունը և ներառականությունը**
   - **Հավասար հնարավորություններ.** ապահովում է, որ բոլոր սովորողները, անկախ իրենց սեռից, հավասար հասանելիություն ունենան ուսուցման հնարավորություններին և ռեսուրսներին:
   - **Ներառականություն.** ստեղծում է դասարանային միջավայր, որտեղ բոլոր սովորողներն իրենց գնահատված և հարգված են զգում և ունեն տվյալ միջավայրին պատկանելության զգացում:

2. **Մարտահրավերներ է նետում կարծրատիպերին**
   - **Քանդում է կարծրատիպերը.** օգնում է վերացնել գենդերային վնասակար կարծրատիպերը, որոնք կարող են սահմանափակել սովորողների ներուժն ու ձգտումները:
   - **Խրախուսում է տարբեր հետաքրքրությունները.** աջակցում է սովորողներին ավանդական գենդերային դերերից դուրս հետաքրքրություններ և կարիերա ուսումնասիրելու հարցում:

3. **Բարելավում է ուսումնական արդյունքները**

- **Բարելավված ներգրավվածություն.** երբ սովորողներն իրենց ներառված և հասկացված են զգում, ավելի հավանական է, որ նրանք ակտիվորեն ներգրավվեն իրենց ուսման մեջ:
- **Ավելի մեծ ակադեմիական նվաճումներ**. աջակցող միջավայրը կարող է հանգեցնել կրթական արդյունքների բարելավմանը բոլոր սովորողների համար:

4. **Պատրաստում է սովորողներին ապագայի համար**

- **21-րդ դարի հմտություններ.** զինում է սովորողներին այն հմտություններով, որոնք անհրաժեշտ են բազմազան և ներառական հասարակության մեջ զարգանալու համար:
- **Ապրումակցում և փոխըմբռնում.** խթանում է ապրումակցումն ու փոխըմբռնումը սովորողների միջև՝ նախապատրաստելով նրանց համագործակցելու տարբեր սեռերի և ծագման մարդկանց հետ:

5. **Նվազեցնում է գենդերային բռնությունը և խտրականությունը**

- **Անվտանգ ուսումնական միջավայր.** ստեղծում է ավելի ապահով դպրոցական միջավայր՝ անդրադառնալով և կանխելով գենդերային բռնությունն ու բուլինգը:
- **Հզորացում.** սովորողներին հնարավորություն է տալիս ճանաչել և վիճարկել գենդերային խտրականությունն ու բռնությունը իրենց համայնքներում:

6. **Աջակցում է հոգեկան առողջությանը և բարեկեցությանը**

- **Դրական ինքնորոշման հայեցակարգ.** սովորողների մոտ խրախուսում է դրական ինքնագիտակցության և ինքնագնահատականի ձևավորումը՝ հաստատելով նրանց գենդերային ինքնությունը:
- **Հոգեկան առողջություն.** նվազեցնում է հոգեկան առողջության մարտահրավերները, որոնք կապված են գենդերի վրա հիմնված խտրականության և կողմնակալության հետ[6]:

[6] Ochman, J.M. (1996), 'The effects of nongender-role stereotyped, same-sex role models in storybooks on the selfesteem of children in grade three', Sex Roles, Vol. 35:11-12, pp711-735

Ինչ պետք է անի ուսումնական հաստատության մանկավարժը գենդերային հավասարությունը խթանելու համար: Ահա մի քանի պարզ խորհուրդներ.

- Խրախուսեք հավասար մասնակցությունը դասարանում՝ ստեղծելով մթնոլորտ, որը ողջունում է բոլոր սովորողների անհատականությունը: Ապահովեք, որ և՛ տղաները, և՛ աղջիկները հավասար հնարավորություններ ունենան խոսելու, առաջնորդելու և դասարանական աշխատանքներին մասնակցելու համար (ապահովել նստատեղերի արդար դասավորվածություն, հավասարապես բաշխել նյութերը, դերեր հատկացնել առանց կողմնակալության և օգտագործել գենդերային առումով չեզոք օրինակներ):
- Ստեղծեք անվտանգ միջավայր, որտեղ սովորողները կարող են ազատ արտահայտվել, և խրախուսեք գենդերային դերերի վերաբերյալ քննադատական մտածելակերպը:
- Ունեցեք հավասար սպասումներ բոլոր սովորողների կրթական առաջընթացից՝ անկախ սեռից: Մի արեք ենթադրություններ սովորողների կարողությունների կամ հետաքրքրությունների մասին՝ ելնելով նրանց սեռից. յուրաքանչյուր սովորողի վերաբերվեք որպես անհատի:
- Խթանեք հավասարակշռված խմբային աշխատանքը՝ ապահովելով թե՛ տղաների, թե՛ աղջիկների հավասար մասնակցությունը և խմբային աշխատանքները ղեկավարելու հնարավորությունը:
- Դասավանդման մեջ ներառեք գենդերազգայուն բովանդակություն՝ ուսումնական ծրագրում ընդգրկելով նյութեր, պատմություններ և օրինակներ, որոնք արտացոլում են բոլոր սեռերի ներդրումն ու փորձը: Հրավիրեք բանախոսների կամ ցուցադրեք տարբեր ոլորտների և ծագման անհատների՝ ցույց տալու, որ հաջողությունն ու հետաքրքրությունները սեռային պատկանելությունից դուրս են:
- Ներգրավեք ընտանիքներին՝ աջակցելով գենդերային հավասարությանը տանը: Կիսվեք ռեսուրսներով և գաղափարներով՝ դպրոցից դուրս գենդերային չեզոք գործելակերպը խթանելու համար[7]:
- Խթանեք դրական փորձի փոխանցումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հաղորդակցության ընթացքում օգտագործվող տերմիններին:

[7] Gender Equity for Educators, Parents, and Community. Equity in Education Series., files.eric.ed.gov/fulltext/ED400216.pdf

Գենդերային խտրականություն կամ գենդերով պայմանավորված կարծրատիպեր

Մանկության տարիներին մեզ ասում են, թե ինչ խաղալիքներով խաղալ՝ ելնելով մեր սեռից, ոչ թե մեր ցանկություններից: Որպես մշակույթ՝ մենք սկսել ենք ընդունել այս կարծրատիպերը՝ որպես փաստեր, և թույլ ենք տվել, որ այն ձևավորի մեր միտքը:



«Գենդերային խտրականություն (ուղղակի, անուղղակի)՝ սեռի հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը»:

(Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀ օրենք, Գլուխ 1-ին, Հոդված 3, մաս 2)

Ինչպես պարզաբանում է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), «Մարդու ինքնության և անհատականության կարևոր մասը՝ գենդերային դերերը, ձևավորվում են սոցիալականացման միջոցով[8]»: Այսօր նման սոցիալականացման վրա ազդում են ոչ միայն ընտանիքը, դպրոցը և աշխատավայրը, այլև լրատվամիջոցները, ներառյալ նոր տեղեկատվական տեխնոլոգիաները, երաժշտությունը և ֆիլմերը: Նման սոցիալական ինստիտուտները հաճախ ծառայում են գենդերային կարծրատիպերի պահպանմանն ու փոխանցմանը:

Միջազգային հետազոտությունները ցույց են տալիս, որ գենդերային նորմերի և գերիշխող կարծրատիպերի նկատմամբ ուսուցիչների մոտեցումն ազդում է սովորողների ուսման, ձեռքբերումների և վերաբերմունքի վրա[9]: Դպրոցներում բախվելով գենդերային

[8] «Գենդերը» վերաբերում է սոցիալականորեն կառուցված դերերին, վարքագծին, գործունեությանը և հատկանիշներին, որոնք տվյալ հասարակությունը հարմար է համարում տղամարդկանց և կանանց համար: What Do We Mean by "Sex" and "Gender"? World Health Organisation: www.who.int/gender/whatisgender/en

[9] Գենդերային արձագանքման հարցերի շուրջ Հայաստանի միջին և ավագ դպրոցների ուսուցիչների պատկերացումները, ՅՈՒՆԻՍԵՖ Երևան, 2021

խտրականությանը՝ սովորողներն ավելի հակված են նախապես ստանձնելու սահմանված դերերը և դրսևորելու հանրության կողմից սպասված վարքագիծ: Սովորողների ուսումնական ձեռքբերումների մասին ուսուցիչների դատողությունները կարելի է դիտարկել որպես ուսուցման հիմնական վարքագիծ, որն ազդում է տարբերակված ուսուցման տեմպի, աջակցության, առաջադրանքների բարդության և ուսումնական այլ հարցերի վերաբերյալ նրանց որոշումների կայացման վրա: Սովորողների տարբեր խմբերից ուսուցչի տարբերվող ակնկալիքները վաղուց մասնագիտական քննարկման առարկա են որպես նրա դասավանդման վարքագծի վրա ազդող գործոն՝ ներառյալ ձեռքբերումների վերաբերյալ նրա դատողությունները: Ուսուցչի ակնկալիքները կարող են բխել կարծրատիպերից և, հետևաբար, տարբերվել սովորողի որոշակի բնութագրերից: Օրինակ՝ ուսուցիչները կարող են ավելի ցածր ակնկալիքներ ունենալ սովորողների ձեռքբերումների առնչությամբ՝ կախված նրանց սեռից[10]:

Գենդերային կարծրատիպերը կարող են մեծապես ազդել ներառական և հավասար կրթական միջավայրի ստեղծման վրա և խախտել բոլոր սովորողների՝ հաջողություն ունենալու հնարավորությունը:

«Ինչն է խանգարում գենդերային հավասարության հաստատմանը հայ հասարակության շրջանում» հարցի պատասխանն ուսումնասիրելու նպատակով իրականացված ոչ պաշտոնական առցանց հետազոտության արդյունքում կարողացանք վերհանել որոշ կարծրատիպային մտքեր, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ գենդերային հավասարության հաստատման գործընթացում: Երեխաների շրջանում կարծրատիպային մտքերի տարածման հիմնական օղակներն են **ընտանիքը, ուսումնական հաստատությունը, ընկերական միջավայրը, ինչպես նաև ԶԼՄ-ները**:



Օղակներից յուրաքանչյուրը երեխայի անձի կայացման այս կամ այն փուլում որոշակի առումով ձևավորում է որոշակի գենդերային կարծրատիպեր, որոնք կարող են նպաստել կամ խոչընդոտել գենդերային հավասարության մասին երեխայի պատկերացումների ամբողջացմանը:

[10] Գենդերարձագանքող ուսուցման գործելակերպեր. ֆոկուսխմբային քննարկումների հիմնական արդյունքները, ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ) Երևան, 2021

Վերոնշյալ կարծրատիպերը կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝

ԿԵՆՑԱՂԱՎԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ	• Տղաները տունը չպետք է հավաքեն, տղաները չեն կարող ափսեները լվանալ, աղջիկները չեն կարող աթոռը տեղափոխել և այլն:
ԱՆՁՆԱՅԻՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ	• Տղաները չեն լացում, աղջիկները պետք է հանգիստ լինեն՝ չբարկանան, չբղավեն, տղաները հուզական առումով ավելի ուժեղ են և այլն:
ԳՈՒՆԱՅԻՆ ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԳՈՒՍՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ	• Տղաների գույնը կապույտն է, աղջիկներինը՝ վարդագույնը և այլն:
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ	• Տղաներն ուժեղ են, աղջիկները՝ թույլ: Տղաները կարող են ծանր իրեր բարձրացնել, աղջիկները չեն կարող:
ԿՐԹԱԿԱՆ՝ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ	• Տղաներն ավելի խելացի են և արագ են ընկալում մատուցվող նյութը, բայց ծույլ են: Աղջիկներն աշխատասեր են, սակայն խելացի չեն:
ԱՊԱԳԱՅԻ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ	• Տղաները լավ բժիշկներ են, աղջիկները կարող են մասնագիտություն չունենալ՝ տնային տնտեսուհի դառնալ և այլն:
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԱՂԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ	• Տղաները պետք է խաղան միայն մեքենաներով, աղջիկները՝ տիկնիկներով և այլն:
ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ	• Աղջիկները պետք է ենթարկվեն տղաներին, իսկ տղաները պետք է զիջեն աղջիկներին:

Ինչպե՞ս հաղթահարել գենդերային կարծրատիպերը երեխաների և դեռահասների շրջանում

Գենդերային հավասարությանը խոչընդոտող կարծրատիպերի հաղթահարումը հնարավոր է միայն ծնող-երեխա-մանկավարժ համատեղ աշխատանքի արդյունքում, քանի որ այն կարծրատիպերը, որոնք ձևավորվում են ընտանիքում, հաճախ հնարավոր չէ հաղթահարել միայն ուսումնական միջավայրում, և հակառակը՝ ուսումնական միջավայրում ձևավորված կարծրատիպերը դժվար է հաղթահարել ընտանիքում:

Հաշվի առնելով այս հանգամանքը՝ մեր կողմից առաջարկվող վարժությունները բաժանված են երկու խմբի: Վարժությունների առաջին խումբն ուղղված է սովորողների հետ աշխատանքին, իսկ երկրորդ խումբը՝ ծնողների: Սովորողների համար նախատեսված վարժություններից յուրաքանչյուրն ուղղված է վերոհիշյալ կարծրատիպերի հաղթահարմանը:



ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ



Վարժությունները կիրառելուց առաջ Ձեզ ենք առաջարկում հարցեր, որոնք կօգնեն պարզել սովորողների և Ձեր նախնական պատկերացումները գենդերային հավասարության վերաբերյալ և հիմք կստեղծեն հետագա քննարկումների համար:

Հարցում
*Ուսուցչի համար

Ձեր կարծիքով՝ ինչ է գենդերային հավասարությունը կրթության մեջ:

- Տղաներն ու աղջիկները պետք է ստանան նույն կրթությունը:
- Բոլորը պետք է ստանան կրթության հավասար հնարավորություններ անկախ իրենց սեռից:
- Ունեմ այլ պատկերացում (նշել):

1. **Ձեր կարծիքով՝ կա՞ն արդյոք գենդերային անհավասարության դեպքեր ձեր դասարանում:**
   - Այո, հաճախ:
   - Երբեմն:
   - Ոչ, չեմ նկատել:
   - Չգիտեմ:

2. **Կարծում եք, որ ձեր դպրոցում տղաներն ու աղջիկները հավասարապես մասնակցու՞մ են դասապրոցեսին (դասեր, խմբային աշխատանքներ, քննարկումներ):**
   - Այո, միշտ:
   - Ոչ, տղաներն ավելի ակտիվ են:
   - Ոչ, աղջիկներն ավելի ակտիվ են:
   - Չեմ նկատել տարբերություն:

3. **Կարծում եք, որ դասավանդման նյութերն ու մեթոդները նպաստո՞ւմ են գենդերային հավասարությանը:**
   - Այո, լիովին:
   - Ոչ, որոշ նյութեր և մեթոդներ չեն բացառում խտրականությունը:
   - Համոզված չեմ:

4. **Ձեր կարծիքով՝ գենդերային հավասարությունը կարող է խթանել սովորողների առաջադիմությունը և ինքնարտահայտումը:**

- Այո, այն շատ կարևոր է սովորողների հաջողության համար:
- Հնարավոր է, բայց ոչ միշտ:
- Չեմ կարծում, որ այն ազդեցություն ունի:

5. **Կցանկանայիք ստանալ լրացուցիչ գիտելիքներ կամ աջակցություն՝ դասավանդման մեջ գենդերային հավասարությունը խթանելու համար:**

- Այո, այն շատ օգտակար կլինի:
- Գուցե, որոշ պարագաներում:
- Ոչ, ինձ անհրաժեշտ չէ:

*Տարրական դպրոցում սովորողների համար

1. **Արդյոք տղաներն ու աղջիկները պետք է ունենան նույն իրավունքները խաղալու, սովորելու և իրենց ցանկությունների հարցում:**

- Այո:
- Ոչ:
- Չգիտեմ:

2. **Կարծում ես, որ տղաներն ու աղջիկները կարող են զբաղվել նույն գործունեությամբ՝ առանց սահմանափակումների:**

- Այո, բոլորն էլ կարող են:
- Ոչ, որոշ բաներ միայն տղաներն են անում, որոշ բաներ՝ աղջիկները:
- Չեմ մտածել այդ մասին:

3. **Ինչ ես կարծում, արդյոք ճիշտ է, որ տղաներն ու աղջիկները պետք է ունենան հավասար հնարավորություններ դպրոցում, դասարանում:**

- Այո:
- Ոչ:
- Կարծում եմ, որ տղաներն ու աղջիկները տարբեր են:

4. **Կան բաներ, որ կուզեիր անել, բայց կարծում ես, որ դա միայն տղաների (աղջիկների) համար է:**

- Այո:
- Ոչ:
- Չգիտեմ:

5. **Կարծում ես, որ բոլորին պետք է հավասար վերաբերվեն, անկախ նրանից՝ աղջիկ են, թե տղա:**

- Այո:
- Ոչ:
- Չգիտեմ:

*Միջին և ավագ դպրոցի սովորողների համար

1. **Ինչ է նշանակում գենդերային հավասարությունը ձեզ համար:**

- Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքներ:
- Տղամարդկանց և կանանց միջև հավասարություն որոշ ոլորտներում:
- Ունեմ այլ պատկերացում (նշել):

2. **Ինչ կարծիքի եք հետևյալ արտահայտության մասին. «Տղամարդիկ և կանայք պետք է ունենան հավասար իրավունքներ և հնարավորություններ բոլոր ոլորտներում»:**

- Լիովին համաձայն եմ:
- Մասամբ համաձայն եմ:
- Համաձայն չեմ:
- Չգիտեմ:

3. **Կարծում եք, որ մեր հասարակությունում գենդերային հավասարության խնդիր կա՞:**

- Այո:
- Ոչ:
- Չեմ մտածել այդ մասին:

4. **Արդյո՞ք երբևէ նկատել եք իրավիճակ, երբ մարդու նկատմամբ խտրական վերաբերմունք են դրսևորել իր սեռի պատճառով:**

- Այո, հաճախ:
- Այո, մի քանի անգամ:
- Ոչ, չեմ նկատել:
- Չեմ կարող ասել:

5. **Կարծում եք, որ տղամարդիկ և կանայք պե՞տք է ունենան նույն պարտակա-նությունները ընտանիքում և աշխատավայրում:**

- Այո:
- Ոչ:
- Որոշ դեպքերու

Սովորողների գենդերային կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված վարժություններ



1.Տղաները լաց են լինում, իսկ աղջիկները խելացի են

Թեմա Խտրականություն, գենդերային հավասարություն, մարդու իրավունքներ

Տարիք 8+

Տևողություն 90ր

Ակտիվության տեսակ Քննարկում և դերախաղ

Ընդհանուր ակնարկ Երեխաները դերախաղի միջոցով քննարկում և ներկայացնում են «սադրիչ» դատողությունների վերաբերյալ իրենց տեսակետները:

Նպատակներ

- Քննարկել գենդերային կարծրատիպերը և գենդերային հավասարությունը:
- Խթանել հանդուրժողականությունը:
- Ցույց տալ, թե ինչպես են կարծրատիպերը վերածվում խտրականության:

Նախապատրաստում

- Ցանկից ընտրեք 3 դատողություն և գրեք առանձին թերթիկների վրա:
- Պատրաստեք չորս թերթիկ՝ «Համաձայն եմ», «Չգիտեմ», «Դեռ մտածում եմ», «Համաձայն չեմ» (բառերի փոխարեն կարող են լինել նշաններ):
- Դրանցից յուրաքանչյուրը տեղադրեք սենյակի չորս անկյուններից մեկում:
- Ընտրեք լրացուցիչ դատողություններ վարժության 2-րդ մասի համար:

Նյութեր

- Պարզ դատողությունների թերթիկ (Հավելված 1)

Նկարագիր

Մաս 1. Դիրքորոշում

1. Երեխաներին բացատրեք գործունեության առաջին մասը.

- Սենյակը բաժանեք չորս անկյունների: Յուրաքանչյուր անկյունում տեղադրեք «**Համաձայն եմ**», «**Չգիտեմ**», «**Դեռ մտածում եմ**», «**Համաձայն չեմ**» պատասխաններով թերթիկներ:
- Հերթով կարդացեք ընտրված դատողությունները: Սովորողները մոտենում են անկյուններից որևէ մեկին՝ կախված նրանից՝ համաձայն են դատողության հետ, համաձայն չեն, կարծիք չունեն, թե մտածելու համար ավելի շատ ժամանակ է պետք:



2. Երբ կարդում եք առաջին դատողությունը, սպասեք, մինչև սովորողները ընտրեն իրենց պատասխանները: Հարցրեք նրանց, թե ինչու են ընտրել տվյալ անկյունը: Տեղեկացրեք սովորողներին, որ կարող են փոխել իրենց դիրքերը, եթե նրանք փոփոխել են իրենց միտքը՝ լսելով ուրիշների պատճառները: Կրկնեք այս գործընթացը բոլոր երեք դատողությունների համար:

3. Վերադարձրեք սովորողներին մեծ խումբ և քննարկեք վարժության ընթացքը.

- Այս գործունեության հետ կապված որևէ բան ձեզ զարմացրել է:
- Ինչ եք մտածում այն մասին, որ մարդիկ տարբեր կարծիքներ ունեին այս դատողությունների վերաբերյալ:
- Որևէ մեկի նշած պատճառները ձեզ ստիպեցի՞ն փոխել ձեր դիրքորոշումը: Ինչո՞ւ:
- Ինչպե՞ս կարող ենք իմանալ, թե որ դիրքորոշումն է ճիշտ:

Մաս 2. Գործել դիրքորոշումից դուրս

4. Սովորողներին բաժանեք հինգ հոգանոց փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբին տվեք տարբեր դատողություններով թերթիկներ (Հավելված 1): Բացատրեք, որ յուրաքանչյուր խումբ ունի մոտ տասնհինգ րոպե՝ կարդալու իր մոտ եղած դատողությունը, քննարկելու այն և ստեղծելու կարճ սցենար, որը կփոխանցի այդ դատողության ուղերձը:

5. Այնուհետև խնդրեք յուրաքանչյուր խմբի ներկայացնել իր սցենարը **դերախաղի միջոցով**: Յուրաքանչյուր ներկայացումից հետո ունկնդիրներին հարցրեք, թե իրենց կարծիքով՝ ինչ ուղերձ էր փոխանցում ներկայացումը: Այնուհետև հարցրեք ներկայացնող խմբին, թե ինչ ուղերձ էին նրանք ցանկանում փոխանցել:

Քննարկում և գնահատում

1. Սովորողների հետ քննարկեք գենդերային կարծրատիպերի ազդեցությունը հետևյալ հարցերի միջոցով.

- Ինչո՞վ էին նման այս դատողությունները: Ինչ գիտեք նմանատիպ այլ դատողությունների մասին:
- Այս դատողությունների առնչությամբ տղաների կամ աղջիկների համար կա՞ն տարբեր կանոններ և ակնկալիքներ: դասարանում կամ դպրոցո՞ւմ: Ընտանիքո՞ւմ:
- Կարո՞ղ եք մտածել այլ դատողությունների մասին, օրինակ՝ թե ինչպիսին պետք է լինեն տղաները կամ աղջիկները կամ ինչ պետք է անեն: Արդյո՞ք նման դիրքորոշումներ կան մեր երկրի այլ վայրերում: Իսկ Եվրոպայի կամ, առհասարակ, աշխարհի այլ մասերո՞ւմ:
- Ինչ կարող է պատահել, երբ տղան կամ աղջիկը համաձայն չեն այս դիրքորոշումների հետ և ցանկանում են ինչ-որ կերպով տարբերվել կամ այլ կերպ գործել: Դուք երբևէ եղե՞լ եք նման իրավիճակում: Ինչպե՞ս էիք զգում: Ինչ արեցիք:
- Արդյո՞ք ունեք պատկերացումներ այն մասին, թե ինչպես սեռային պատկանելությունը կարող է ազդել մեծահասակների կամ երեխաների վրա:

2. Գենդերային կարծրատիպերը կապեք խտրականության հետ՝ տալով հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս են տղամարդկանց և կանանց մասին այս դիրքորոշումները սահմանափակում մեր ընտրությունը: Կարո՞ղ եք մի քանի օրինակ բերել:
- Ինչպե՞ս են այս սահմանափակումներն ազդում մարդու իրավունքների վրա:

- Ինչ կարող ենք անել ապագայում, որպեսզի տղաներն ու աղջիկները կարողանան ավելի ազատ գործել, այնպես, ինչպես ցանկանում են:

Այլ գաղափարներ

Երեխաների հետ մշակեք «վարքագծի կանոնների» պաստառ այն մասին, թե ինչպիսին պետք է լինի սովորողների պահվածքը միմյանց նկատմամբ, և ինչպես ապահովել, որ աղջիկների և տղաների նկատմամբ հավասար վերաբերմունք ցուցաբերվի: Փակցրեք այն պատին և անդրադարձեք դրան, երբ դասարանում առկա են կոնֆլիկտներ:

Խորհուրդներ վարողին

- Զգույշ եղեք, որպեսզի չամրապնդեք այն կարծրատիպերը, որոնք իրականում փորձում է լուծել այս վարժությունը: Տեղյակ եղեք գենդերի հետ կապված ձեր սեփական նախապաշարմունքների և կարծրատիպերի մասին, քանի որ որպես խմբավար կարող եք դրանք փոխանցել սովորողներին:
- Ընտրեք դատողություններ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես աղջիկներն ու տղաները, ֆիզիկապես տարբեր լինելով հանդերձ, ունեն հավասար իրավունքներ: Ընտրեք բավական հակասական դատողություններ՝ կարծիքների տարբերություն ապահովելու համար:
- Ծնողների վերաբերմունքը մեծապես ազդում է երեխաների վերաբերմունքի վրա: Դուք կարող եք ծնողներից լսել ինչպես դրական, այնպես էլ բացասական արձագանքներ այս վարժության վերաբերյալ:

Հարմարեցումներ

- Եթե ժամանակի խնդիր կա, կարող եք կատարել վարժության՝ միայն ձեր խմբին առավել համապատասխան մասը:
- Սցենարի փոխարեն երեխաներին կարող եք խնդրել ներկայացնել իրենց որևէ ստեղծագործություն տեսողական արվեստի ժանրում (օրինակ՝ գծանկար, անիմացիա, կոլաժ՝ ամսագրերից կտրահանված նկարներով և այլն):

Աղբյուր

Compasito - Manual on human rights education for children, 2nd edition, 2009, p.82

2.Հավասարության զգացողության ձևավորում

Թեմա	Խտրականություն, գենդերային հավասարություն, մարդու իրավունքներ
Տարիք	5+
Տևողություն	10ր
Ակտիվության տեսակ	Քննարկում, դերախաղ
Ընդհանուր ակնարկ	Երեխաները վարժության միջոցով քննարկում են հավասարության գաղափարը, դրա կարևորությունը միջանձնային հարաբերություններում:
Նպատակներ	• Քննարկել գենդերային կարծրատիպերը և գենդերային հավասարությունը: • Գիտակցել հավասարության զգացման կարևորությունը:
Նյութեր	• M&M's կոնֆետներ

Նկարագիր

1. Նախապես հաշվեք մասնակիցների քանակը, այնուհետև պատրաստեք M&Ms կոնֆետներ մասնակիցների թվից 2-3-ով պակաս: Օրինակ, եթե մասնակիցները 30-ն են, ապա անհրաժեշտ է 27 կոնֆետ:

2. Այնուհետև կոնֆետներով տուփը տվեք երեխաներին և առաջարկեք յուրաքանչյուրին մեկական կոնֆետ վերցնել տուփից: Երեք սովորողի կոնֆետ չի մնում: Խնդրեք նրանց նկարագրել իրենց զգացողությունները և պատասխանել հետևյալ հարցերին.

- Ինչ զգացին նրանք, ովքեր տեսան, որ մյուսները չունեն կոնֆետ:
- Ինչ զգացին նրանք, ովքեր տեսան, որ մյուսները կոնֆետ ունեն:
- Ինչ կարող են անել կոնֆետ չունեցողները կոնֆետ ունեցողների համար:
- Կարող եք այլ իրավիճակներ նկարագրել, երբ, օրինակ, մարդիկ իրենց մերժված կամ լքված են զգում:

Խորհուրդներ վարողին

- Մասնակիցներին լսելուց հետո կազմակերպեք նաև քննարկումներ գենդերային հավասարության, տղաների և աղջիկների հավասար հնարավորությունների թեմաների շուրջ:
- Հանձնարարեք մասնակիցներին մշակել առաջարկներ, որոնք հնարավորություն կտան ստեղծել այնպիսի սոցիալական միջավայր, որում կա հավասարություն:

3.Ժուկով-ժամանակով...

Թեմա Ժողովրդավարություն, խտրականություն, գենդերային հավասարություն

Տարիք 7+

Տևողություն 40ր

Ակտիվության տեսակ Պատմության ունկնդրում և քննարկում

Ընդհանուր ակնարկ Երեխաները ծանոթ պատմության կամ հեքիաթը վերապատմելու միջոցով քննարկում են գենդերային կարծրատիպերը:

Նպատակներ

- Պատմություններում և առօրյա կյանքում ճանաչել կարծրատիպային գենդերային դերերն ու առանձնահատկությունները:
- Քննարկել ավանդական և ժամանակակից գենդերային դերերը:
- Խրախուսել գենդերային հավասարությունը:

Նախապատրաստում

- Վերապատմեք հայտնի պատմությունը (օրինակ՝ վեպ, հեքիաթ, ֆիլմ)՝ փոխելով հերոսների մեծամասնության սեռը (Հավելված 2, «Մոխրոտի» օրինակը): Անհրաժեշտության դեպքում փոխեք հերոսների անունները և այլ մանրամասներ:

Նյութեր

- Ֆլիպչարտ և գրիչներ,
- Հավելված 2. «Շրջված հեքիաթի օրինակ»

Նկարագիր

1. Խնդրեք երեխաներին շրջանաձև նստել հարմարավետ դիրքով: Բացատրեք, որ դուք պատրաստվում եք նրանց պատմություն պատմել. նրանք պետք է ուշադիր լսեն և փորձեն պատմության մեջ նկատել որևէ արտասովոր բան: Սովորողների համար կարդացեք փոփոխված պատմությունը (տես «Նախապատրաստում» բաժինը): Ժամանակ առ ժամանակ կանգ առեք և հարցրեք. «Այս պատմության մեջ որևէ արտասովոր բան նկատո՞ւմ եք»: Երբ բոլոր սովորողները հասկանան դերերի փոխարկումները, կարող է ավելորդ դառնալ պատմությունը մինչև վերջ կարդալը և, գուցե, ցանկանաք անցնել հաջորդ քայլին:

2. Քննարկեք պատմությունը՝ տալով հետևյալ հարցերը.

- Ձեզ դուր եկա՞վ պատմությունը:
- Դուք դրա մեջ որևէ անսովոր բան գտա՞ք:
- Ե՞րբ հասկացաք, որ ինչ-որ բան անսովոր է:

Խնդրեք բերել օրինակներ:

3. Նշեք, որ ինչ-որ բան մեզ անսովոր է թվում, երբ այն տարբերվում է մեր ամենօրյա փորձից և սպասումներից: Խնդրեք սովորողներին մտածել այն բնութագրերի և գործունեության մասին, որոնք նրանք բնորոշ են համարում տղամարդկանց և կանանց առօրյա կյանքում: Գրառեք նրանց առաջարկները, ինչպես ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Կարծրատիպային գենդերային դերեր

	ՏՂԱՆԵՐ ՏՂԱՄԱՐԴԻԿ	ԱՂՋԻԿՆԵՐ ԿԱՆԱՅՔ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ	Հետաքրքրասեր, խելացի, համարձակ, բարձրաձայն, արկածախնդիր, ագրեսիվ, հավակնոտ, կարճ մազերով	Բարեկիրթ, զգայուն, լուռ, ուրիշների մասին մտածող, երկչոտ, աղմկոտ, հնազանդ, գեղեցիկ զգեստներ կրող, երկար մազերով
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	Սպորտով տարվելը, կռիվների մեջ ընկնելը, աշխատանքի գնալը, լիդեր լինելը, բեռնատարներ վարելը	Տնային գործերով զբաղվելը, հեշտությամբ հուզվելը, բամբասելը, գեղեցիկ հագուստներով տարվելը, միջատներից վախենալը

4. Քննարկեք այս աղյուսակում բերված նյութերը.

- Համեմատեք այս աղյուսակը պատմության ծանոթ տարբերակի հետ: Արդյո՞ք հերոսներն ունեն բնորոշ հատկանիշներ և գործողություններ (օրինակ՝ Մոխրոտը մնում է տանը, լաց է լինում, բռնության է ենթարկվում և գեղեցիկ հագուստ է ստանում, մինչդեռ արքայազնը քայլեր է ձեռնարկում կին գտնելու համար և մշակում է Մոխրոտին գտնելու խելացի ծրագիր):
- Հարցրեք երեխաներին՝ արդյոք նրանք կարող են հիշել այլ պատմություններ, որտեղ հերոսներն ունեն այս բնորոշ հատկանիշներն ու գործողությունները: Նկարագրեք այդ պատմությունները, ինչպես նշված են, և խնդրեք երեխաներին մեկնաբանել իրենց առաջարկները:

5. Արդյո՞ք այս հատկանիշներն ու գործունեությունը բնորոշ են ժամանակակից կանանց և տղամարդկանց:

- Կազմեք գծապատկեր, ինչպիսին բերված է աղյուսակ 2-ում, և խնդրեք սովորողներին արձանագրել անսովոր վարքագծի իրենց դիտարկումները սկզբում պատմության մեջ, այնուհետև իրական կյանքում՝ օրինակներ բերելով իրենց փորձից կամ լսածից:

6. Համեմատեք և սովորողների հետ քննարկեք այս երկու գծապատկերները:

7. Սահմանեք կարծրատիպ եզրույթը[11] և բերեք օրինակներ:

8. Խնդրեք սովորողներին նայել իրենց բնորոշ հատկանիշների և գործունեության աղյուսակը: Խնդրեք նրանց որոշել, թե որ հատկանիշներն ու գործողություններն են կենսաբանական փաստեր տղամարդկանց կամ կանանց մասին, և որոնք են համոզմունքներ, վերաբերմունք կամ կարծրատիպեր:

[11] Կարծրատիպը (ստերեոտիպը) հասարակության մեջ ընդունված, հաճախ պարզեցված և ընդհանուր պատկերացումն է ինչ-որ խմբի, սոցիալական երևույթի կամ անհատի մասին: Կարծրատիպերը սովորաբար ձևավորվում են սուբյեկտիվ կարծիքների կամ նախապաշարմունքների հիման վրա և կարող են ներառել գենդերային, էթնիկ, ռասայական կամ այլ խտրական գաղափարներ: Այսպիսի պատկերացումները հաճախ չեն արտացոլում իրականությունը և կարող են հանգեցնել սոցիալական անհավասարությունների և խտրականության:

Աղյուսակ 2. Ոչ կարծրատիպային գենդերային դերեր

	ՏՂԱՆԵՐ ՏՂԱՄԱՐԴԻԿ	ԱՂՋԻԿՆԵՐ ԿԱՆԱՅՔ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ	Պատմության մեջ՝ Օգնության կարիք ունի Ձեր փորձից _	Պատմության մեջ՝ հրամանատար, խելացի Ձեր փորձից _
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	Պատմության մեջ՝ Լաց է լինում, տնային գործեր է անում, գեղեցիկ հագուստ է ցանկանում, մնում է տանը: Ձեր փորձից _	Պատմության մեջ՝ Ակտիվորեն հետապնդում է ամուսնուն, կազմակերպում է խուզարկություն: Ձեր փորձից _

9. Նշեք, որ այնպիսի դերերը, ինչպիսիք են գումար վաստակելը, երեխաներին դաստիարակելը և տնային գործերը կատարելը, այսօր և՛ տղամարդկանց, և՛ կանանց ընդհանուր պարտականություններն են:

Քննարկում և գնահատում

1. Երբ սովորողները հասկանան կարծրատիպ հասկացությունը, տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս եք վերաբերվում մարդկանց, երբ նրանք չեն համապատասխանում առկա կարծրատիպերին:

- Ինչո՞ւ են կարծրատիպերը անարդար որոշ մարդկանց նկատմամբ:
- Ինչպե՞ս են գենդերային կարծրատիպերը ստեղծում անհավասարություն տղամարդկանց և կանանց, տղաների և աղջիկների միջև:
- Ի՞նչ կարող եք անել կարծրատիպերի դեմ պայքարելու համար:

2. Հարցրեք սովորողներին՝ արդյո՞ք նրանք տեսնում են որևէ կապ գենդերային կարծրատիպերի և մարդու իրավունքների միջև: Օգնեք նրանց հասկանալ, որ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի զերծ մնալ խտրականությունից, ներառյալ սեռի կամ գենդերային կարծրատիպերի վրա հիմնված խտրականությունը:

3. Ամփոփեք վարժությունը՝ հարցնելով սովորողներին, թե ինչ զգացողություններ ունեցան նրանք այս գործունեության ընթացքում և ինչպես են վերաբերվում այս վարժությանը:

Խորհուրդներ վարողին

- Այս գործունեության մեջ ձեր նպատակը պետք է լինի խթանել գենդերային հավասարությունը և խրախուսել երեխաներին կասկածի տակ դնելու գենդերային դերերի վերաբերյալ իրենց և այլոց դատողությունները:
- Նշեք, որ տղամարդկանց և կանանց վարքագծի ակնկալիքները կարող են տարբեր լինել տարբեր երկրներում, համայնքներում և նույնիսկ ընտանիքներում: Ընդգծեք, որ հավասարությունը չի նշանակում լինել «նույնը»:
- Քննարկմանը և գնահատմանն ուղղված հարցեր տալիս ուշադիր եղեք այն փաստի նկատմամբ, որ բացառված չէ, որ որոշ սովորողներ արդեն իսկ ծաղրի են ենթարկվում և մեկուսացված են իրենց ոչ ավանդական գենդերային պահվածքի համար: Թույլ մի տվեք, որ քննարկումը նրանց անհանգստություն կամ անհարմարություն պատճառի:
- Տարրական դասարաններում սովորողների հետ աշխատելիս պարտադիր չէ օգտագործել այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են «գենդերը» կամ «գենդերային դերերը»:

Հարմարեցումներ

- Մեծ խմբի հետ աշխատելիս ստեղծեք 4-5 հոգուց բաղկացած փոքր խմբեր: Յուրաքանչյուրին տվեք Աղյուսակ 1-ի մեկական օրինակ և խնդրեք լրացնել այն: Այնուհետև մեծ խմբում քննարկեք ավանդական և ոչ ավանդական (ժամանակակից) գենդերային դերերը: Քննարկումից հետո խնդրեք երեխաներին վերադառնալ իրենց փոքր խմբեր և լրացնել 2-րդ աղյուսակը՝ կանանց և տղամարդկանց ոչ ավանդական բնութագրերը և գործունեությունը: Ավարտեք գործունեությունը մեծ խմբում քննարկումով:

- Բարձր դասարաններում սովորողների դեպքում հեքիաթի փոխարեն ընտրեք վեպ կամ հայտնի ֆիլմ: Սկսեք պատմությունը՝ փոփոխելով հերոսների սեռը, այնուհետև թույլ տվեք, որ երեխաները շարունակեն պատմել այն:

Աղբյուր

Adapted from the activity Gender-bender, ABC Teaching Human Rights, Practical activities for primary and secondary schools, United Nations, OHCHR, New York, Geneva, 2004, and Myra Sadker Advocates: www.sadker.org

3.Հասկացություններ

Թեմա	Գենդերային հավասարություն
Տարիք	7+
Տևողություն	15ր
Ակտիվության տեսակ	Քննարկում, գործնական աշխատանք
Ընդհանուր ակնարկ	Երեխաների հետ քննարկվում են տարբեր հասկացությունների վերաբերյալ առկա գենդերային կարծրատիպերը:
Նպատակներ	• Հաղթահարել գենդերային կարծրատիպերը: • Խրախուսել գենդերային հավասարությունը:
Նյութեր	• Ցուցանակներ, որոնց վրա գրված են՝ աղջիկ, տղա:

Նկարագիր

1. Թվարկեք տարբեր հասկացություններ և առաջարկեք սովորողներին պատասխանել հարցին՝ տվյալ հասկացությունը տղաներին է համապատասխանում, թե՞ աղջիկներին: Ամեն անգամ, երբ մասնագետն ինչ-որ հասկացություն է բարձրաձայնում, սովորողները բարձրացնում են ցուցանակներից որևէ մեկը կամ մյուսը:

- Փրկարար
- Պար
- Ուսուցիչ
- Խոհարար
- Վարդագույն
- Բժիշկ
- Բուժքույր
- Ավտոմեքենաներ
- Գիտնական
- Կապույտ

- Հավաքարար
- Իրավաբան
- Ծրագրավորող
- Կարմիր
- Կանաչ
- Մաթեմատիկա

2. Պատասխանները լսելուց հետո սովորողներին տվեք հետևյալ հարցերը.

- Ինչ եք կարծում, ինչն էր պատճառը, որ կարծիքները տարբեր էին:
- Ինչի՞ արդյունքում են ձևավորվել այդ կարծիքները, որտեղից են դրանք ձևավորվել:
- Ճիշտ է այդ հասկացություններն ըստ սեռի բաժանելը:

Խորհուրդներ վարողին

- Կարևոր է սովորողների հետ քննարկել գենդերային հավասարության, մասնագիտությունների, գույների ընտրության հարցում գենդերային կարծրատիպերից խուսափելու հարցը:
- Սովորողների հետ կարելի է քննարկել նաև ստորև բերված նկարները:

4.Ինչ եմ ես սիրում

Թեմա	Խտրականություն, ընտանիք, գենդերային հավասարություն
Տարիք	8+
Տևողություն	45ր
Ակտիվության տեսակ	Նախապատվությունների հստակեցում, քննարկում
Ընդհանուր ակնարկ	Սովորողները թվարկում են որոշակի գործողություններ, վարքագծեր, որոնք համարվում են իրենց սեռին «համապատասխան» կամ «անհամապատասխան», ասում են, թե որոնք են իրենց դուր գալիս կամ դուր չեն գալիս, կամ գուցե ցանկանում են անել: Այնուհետև նրանք քննարկում են գենդերային կարծրատիպերը և դրանք կապում մարդու իրավունքների հետ:
Նպատակներ	• Բացահայտել սեփական և ուրիշների կարողություններն ու գիտելիքները: • Ճանաչել գենդերային կարծրատիպերի ազդեցությունը:
Նյութեր	• Թղթեր և մատիտներ կամ նախապես տպված աղյուսակներ

Նկարագիր

1. Ներկայացրեք գենդերային դերերի թեման՝ հարցնելով սովորողներին. «Կա՞ն վարքագծեր և գործողություններ, որոնք համարվում են աղջիկների կամ տղաների գործողություններ»: Խնդրեք նրանց օրինակներ բերել:

2. Երեխաներին տվեք թերթիկներ և մատիտներ: Խնդրեք յուրաքանչյուրին գրի առնել հետևյալը.

- չորս գործողություն, որոնք դուք անում եք, սիրում եք անել, և որոնք համարվում են «ձեր սեռին համապատասխան գործողություններ»,
- չորս գործողություն, որոնք ստիպված եք անում, քանի որ չեք սիրում անել, սակայն որոնք համարվում են «ձեր սեռին համար համապատասխան գործողություններ»,
- «հակառակ սեռին համապատասխան» չորս գործողություն, որոնք դուք չեք անում և չէիք ցանկանա անել,
- «հակառակ սեռին համապատասխան» չորս գործողություն, որոնք դուք չեք անում, բայց իսկապես կցանկանայիք անել:

3. Խնդրեք սովորողներին կիսվել իրենց պատասխաններով, այնուհետև գրանցել դրանք ստորև ներկայացված աղյուսակում:

	Ես սիրով անում եմ	Ես ստիպված եմ անում	Ես չեմ անում և չեմ էլ ուզում անել	Ես չեմ անում, բայց կուզեի անել
Աղջիկներ	• • •	• • •	• • •	• • •
Տղաներ	• • •	• • •	• • •	• • •

Քննարկում և գնահատում

1. Քննարկեք վարժությունը՝ տալով սովորողներին հետևյալ հարցերը.

- Ձեզ զարմացրի՞ն որոշ բաներ, որոնք մարդկանց դուր են գալիս կամ դուր չեն գալիս:
- Ձեր ընտանիքի անդամներն ունե՞ն նույն պատկերացումներն այն մասին, թե ինչն է «համապատասխանում» տղամարդկանց և տղաներին կամ կանանց և աղջիկներին:

- Ինչպե՞ս ենք մեզ մոտ ձևավորվում մեր պատկերացումներն այն մասին, թե ինչն է «համապատասխանում» տղամարդկանց և տղաներին կամ կանանց և աղջիկներին:

2. Գործունեությունը կապել մարդու իրավունքների հետ՝ տալով հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է տղաների և աղջիկների գործողությունների սահմանափակումը ազդում նրանց վրա անհատապես: Ինչպե՞ս կարող է այն ազդել ընտանիքի վրա: Իսկ հասարակությա՞ն:
- Ի՞նչ եք կարծում, գենդերային դերերը փոխվո՞ւմ են: Եթե այո, ապա ինչպե՞ս:
- Երբևէ փորձե՞լ եք մարտահրավեր նետել գենդերային դերերին: Ի՞նչ է պատահել:
- Ինչո՞ւ են գենդերային դերերը (կամ կարծրատիպերը) սահմանափակում մարդու իրավունքները:

Խորհրդածելու նյութ

- Սովորողների հետ քննարկեք **«Ես չեմ անում, բայց կուզեի անել»** սյունակում նշված գործողությունները: Օգնեք նրանց խմբում գտնել հնարավորություններ՝ փորձելու այս գործողություններից մի քանիսը ընդունելի միջավայրում

Խորհուրդներ վարողին

- Որոշ երեխաներ կարող են չցանկանալ կամ ամաչել բարձրաձայնել, որ իրենց դուր է գալիս անել բաներ, որոնք ոմանք համարում են իրենց սեռին «անհամապատասխան»: Դրանից խուսափելու համար դուք կարող եք 1) հավաքել թերթիկները, խառնել և խնդրել երեխաներին կարդալ երեխաների անանուն պատասխանները անկախ սեռից. 2) երեխաներին բաժանեք տղաների կամ աղջիկների փոքր, միասեռ խմբերի և խնդրեք նրանց խմբով պատասխանել հարցերին:
- Խրախուսեք սովորողներին ներառել վարքագծային ակնկալիքները և արտաքին տեսքը «ձեր սեռին համապատասխան գործողությունների» շարքում (օրինակ՝ կրել գեղեցիկ հագուստ, բամբասել, հեշտությամբ լաց լինել, վատ բառապաշար օգտագործել, վեճերի մեջ մտնել):

- Եթե հարմար եք գտնում, ներկայացրեք «կարծրատիպ» բառը և քննարկեք, թե դա ինչ է նշանակում՝ օրինակներ բերելով խմբից: Քննարկեք, թե ինչպես կարծրատիպերը կարող են սահմանափակել մարդկանց իրավունքները:

Աղբյուր

Adapted from the activity "What I Like and What I Do" Compasito - Manual on human rights education for children, 2nd edition, 2009, p.185-186

5.Քննարկում

Թեմա	Գենդերային հավասարություն
Տարիք	8+
Տևողություն	20ր
Ակտիվության տեսակ	Քննարկում
Ընդհանուր ակնարկ	Մասնակիցները դերային խաղի միջոցով քննարկում են գենդերային կարծրատիպերի հարցը:
Նպատակներ	• Հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
Նյութեր	• Պնդումների թերթիկ

Նկարագիր

1. Մասնակիցներին բաժանեք երեք խմբի: Մի խմբին հանձնարարեք մասնագետի կողմից ներկայացվող կարծիքներին դեմ հանդես գալ, մյուս խումբին՝ կողմ: Մեջտեղում կանգնեցրեք երրորդ խմբին:

2. Ընթերցեք ստորև ներկայացված պնդումները: Նրանք, ովքեր կողմ են այդ պնդումներին, պետք է փորձեն հիմնավորել, որ դրանք ճիշտ են, ովքեր դեմ են՝ հակառակը: Վերջում նրանք, ովքեր կանգնած են մեջտեղում, միանում են այն խմբին, որի հիմնավորումներն ավելի արժանահավատ կամ փաստարկված էին:

- Մարդիկ պետք է ընտրեն այն աշխատանքը, որն իրենց ամենից շատ է հետաքրքրում:
- Մասնագիտության ընտրության հարցում սեռը պետք է կապ չունենա:
- Դաստիարակը կնոջ մասնագիտություն է:
- Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավունքներ:
- Տղամարդիկ ավելի ուժեղ են մաթեմատիկայից, քան կանայք:
- Աղջիկները ավելի լավ են սովորում, քան տղաները:
- Համակարգչային տեխնոլոգիաները տղաներն ավելի հեշտ են յուրացնում, քան աղջիկները:

Խորհուրդներ վարողին

- Վարժությունն ամփոփեք՝ ընդգծելով գենդերային հավասարության գաղափարի կարևորությունը:
- Առաջարկեք մասնակիցներին, որ իրենք ևս առաջադրեն որոշակի պնդումներ, քննարկեք պնդումները նույն սկզբունքով:
- Եթե գենդերային հավասարությանը խոչընդոտող մոտեցումներն ավելի համոզիչ են թվում երրորդ խմբի համար, փորձեք քննարկման միջոցով շտկել իրավիճակը:

6.Մասնագիտություն և գենդեր

Թեմա	Գենդերային հավասարություն
Տարիք	10+
Տևողություն	20ր
Ակտիվության տեսակ	Նկարի քննարկում
Ընդհանուր ակնարկ	Մասնագետը մասնակիցների հետ քննարկում է մասնագիտական գենդերային կարծրատիպերի և դրանց հաղթահարման հիմնահարցը:
Նպատակներ	• Հաղթահարել մասնագիտական կարծրատիպերը:
Նյութեր	• Մասնագիտական կարծրատիպերի վերաբերյալ նկար

Նկարագիր

1. Ներկայացրեք սովորողներին Նկար 1-ում պատկերված երկխոսությունը, այնուհետև առաջարկեք պատասխանել հետևյալ հարցերին:

- Եղել են դեպքեր, երբ ձեր ծնողի հետ նմանօրինակ զրույցներ եք ունեցել:
- Ձեր կարծիքով աղջկա հետագա կյանքի վրա որևէ ազդեցություն կունենա հայրիկի նման դիրքորոշումը:
- Ինչ կարծիք ունեք այդ դիրքորոշման վերաբերյալ, ինչու:

2. Սովորողների հետ քննարկեք ապագայի հետ կապված այն բոլոր գենդերային կարծրատիպերը, որոնք վերջիններս հաճախ են հանդիպում իրենց համայնքներում:



7.Սոցիալ–մշակութային առանձնա-հատկություններ և գենդեր

Թեմա	Գենդերային հավասարություն
Տարիք	8+
Տևողություն	10ր
Ակտիվության տեսակ	Քննարկում
Ընդհանուր ակնարկ	Մասնակիցները քննարկում են գենդերային ասոցիատիվ հասկացությունները:
Նպատակներ	• Հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
Նյութեր	• Գրատախտակ, կավիճ

Նկարագիր

1. Գրատախտակը բաժանեք երկու մասի: Մի կողմում գրեք՝ տղաներ, մյուս կողմում՝ աղջիկներ: Այնուհետև առաջարկեք սովորողներից յուրաքանչյուրին մոտենալ և գրել այն առաջին զուգորդումը (ասոցիացիան), որը նրանք ունենում են այդ բառերն ասելիս: Կարող են լինել նմանօրինակ պատասխաններ՝

Աղջիկներ	Տղաներ
Գեղեցիկ	Ուժեղ
Խնամված	Ագրեսիվ
Հուզական	Խելացի

2. Առաջադրանքը ավարտելուց հետո սովորողների հետ քննարկեք հետևյալ հարցերը.

- Որո՞նք են տղաների և աղջիկների նմանությունները:
- Որո՞նք են տղաների և աղջիկների տարբերությունները:

- Այդ նմանություններն ու տարբերությունները կենսաբանակա՞ն են, թե՞ սոցիալական:
- Որո՞նք են այն ասոցիացիաները, որոնք ներառել եք տղաների դեպքում, բայց կիրառելի են նաև աղջիկների դեպքում և հակառակը:

Խորհուրդներ վարողին

- Ամփոփեք վարժությունը՝ սովորողների հետ քննարկելով գենդերային հավասարության գաղափարը՝ ելնելով ստացված պատասխաններից:
- Փորձեք ակտիվացնել երեխաների քննադատական մտածողությունը՝ փաստելով, որ, օրինակ, աղջիկները ևս կարող են լինել ուժեղ, տղանները՝ խնամված և այլն:

8.Սոցիալ-մշակութային գենդերային կարծրատիպեր

Թեմա	Գենդերային հավասարություն
Տարիք	11+
Տևողություն	10ր
Ակտիվության տեսակ	Քննարկում
Ընդհանուր ակնարկ	Մասնակիցները վարժության ընթացքում քննարկում են գենդերային կարծրատիպերի բացասական հետևանքները:
Նպատակներ	• Հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
Նյութեր	• Գնդակ

Նկարագիր

1. Խնդրեք սովորողներին նստել շրջանաձև, այնուհետև գնդակը նետեք մասնակիցներից մեկին և խնդրեք պատասխանել այն հարցին, թե իր կյանքի ընթացքում ինչ գենդերային կարծրատիպերի է բախվել, օրինակ՝ «Դու տղա ես/ աղջիկ ես, այսպես պետք է չանես, այսպես պետք է անես...», որոնք են իրեն խանգարել, և ինչպես է փորձել հաղթահարել դրանք:

Խորհուրդներ վարողին

- Ամփոփեք վարժությունը՝ սովորողներին առաջարկելով լուծումներ՝ նմանօրինակ դեպքերի կրկնությունը բացառելու համար:
- Քննարկեք մասնակիցների հետ իրենց իսկ կարծրատիպերը, թույլ տվեք մշակել դրանց հաղթահարման բանաձևեր և ներկայացնել դրանք:

Աղբյուր

ICRW, 2011. GEMS Training Manual for facilitators. New Delhi: ICRW.

9.Անձնային-հոգեբանական կարծրատիպեր

Թեմա	Գենդերային հավասարություն
Տարիք	8+
Տևողություն	15ր
Ակտիվության տեսակ	Քննարկում
Ընդհանուր ակնարկ	Մասնակիցները քննարկման միջոցով փորձում են վերհանել մարդկանց անձնային առանձնահատկությունների վերաբերյալ առկա գենդերային կարծրատիպերը և դրանց հաղթահարման ուղիները:
Նպատակներ	• Հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
Նյութեր	• Թղթեր, գրիչներ, թերթիկներ մասնակիցների քանակին համապատասխան

Նկարագիր

1. Մասնագետն առաջարկում է սովորողներին թերթիկների վրա պատկերել Վեննի դիագրամ: Խնդրում է յուրաքանչյուրին դիագրամի մի կողմում գրել կամ պատկերել տղա, իսկ մյուս կողմում՝ աղջիկ: Առաջարկում է մասնակիցներին դիագրամի հատվող մասում գրել բնավորության այնպիսի գծեր, որոնք, ըստ իրենց, կարող են բնորոշ լինել և՛ աղջիկներին, և՛ տղաներին:

2. Այնուհետև առաջարկում է համեմատել իրենց նշումները, գտնել նմանություններ և տարբերություններ:

Խորհուրդներ վարողին

Վարժության վերջում քննարկեք բնավորության բոլոր այն գծերը, որոնց անդրադարձ չի կատարվել՝ փորձելով ևս մեկ անգամ ընդգծել գենդերային հավասարության կարևորությունը նաև անձնային-հոգեբանական կարծրատիպերի հաղթահարման տեսանկյունից:



10.Հետաքրքրությունների, խաղերի հետ կապված կարծրատիպեր

Թեմա	Գենդերային հավասարություն
Տարիք	8+
Տևողություն	10ր
Ակտիվության տեսակ	Քննարկում
Ընդհանուր ակնարկ	Քննարկման ընթացքում մասնակիցներն ուսումնասիրելու են ակտիվության ձևերի, ճաշակի և գենդերային հավասարության թեմաները:
Նպատակներ	• Հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
Նյութեր	• Թուղթ, գրիչ

Նկարագիր

1. Առաջարկեք սովորողներին շարունակել «Բոլորն էլ կարող են սիրել...» նկարը՝ պատկերելով այն ամենը, ինչ մարդիկ կարող են սիրել անկախ սեռային պատկանելությունից՝ խաղեր, ուտելիքներ, իրեր և այլն:

2. Խնդրեք սովորողներին ըստ ցանկության ներկայացնել իրենց նկարները:

Բոլորն էլ կարող են սիրել...



Խորհուրդներ վարողին

- Առաջադրանքն ավելի մատչելի դարձնելու համար կարող եք նախապես գրատախտակը բաժանել մի քանի սյունակների՝ խաղեր, սպորտաձևեր, սնունդ, աշխատանք և այլն:
- Առաջադրանքն ամփոփեք՝ սովորողների հետ քննարկելով հետաքրքրությունների հետ կապված գենդերային կարծրատիպերի հաղթահարման հնարավորության հարցը:
- Նախապես կարող եք պատրաստել սահիկաշար, որում ներկայացված կլինեն տարբեր սպորտաձևերում, պաշտոններում, առհասարակ կյանքի տարբեր ոլորտներում հաջողության հասած կանայք և տղամարդիկ:
- Թույլ տվեք երեխաներին ներկայացնել իրենց շրջապատի այն մարդկանց, ովքեր հաջողության են հասել կյանքում: Այդ ընթացքում փորձեք ևս մեկ անգամ ոչ շեշտադրված կերպով ընդգծել գենդերային խտրականությունից խուսափելու հիմնահարցը:

11. Ես կասեմ

Թեմա	գենդերային հավասարություն
Տարիք	8+
Տևողություն	20ր
Ակտիվության տեսակ	Քննարկում
Ընդհանուր ակնարկ	Քննարկման արդյունքում երեխաները կսովորեն ինքնարտահայտվել, հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
Նպատակներ	• Բացահայտել և հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
Նյութեր	• Թղթեր, գրիչներ

Նկարագիր

1. Պաստառի, սահիկի կամ գրատախտակի վրա ունեցեք Կետ 3-ի տեքստը: Առաջարկեք սովորողներին իրենց թերթիկներում գրառել տեքստը՝ լրացնելով բաց թողնված հատվածները:

2. Երբ բոլոր սովորողներն ավարտեն իրենց աշխատանքը, առաջարկեք կազմակերպել քննարկում իրենց գրառումների շուրջ:

3. Առաջարկվող տեքստը՝ ստորև:

*Միայն այն պատճառով, որ ես աղջիկ (տղա) եմ, մարդիկ մտածում են, որ ես*____
_____
_____, *բայց իրականությունն այն է, որ*_____
_____
_____:

Ես կարող եմ մարդկանց ապացուցել, որ անգամ լինելով աղջիկ (տղա), ես կարող եմ _____

_____:

Խորհուրդներ վարողին

- Ամփոփեք վարժությունը՝ սովորողների հետ քննարկելով գենդերային կարծրատիպերի հաղթահարման ուղիների հարցը՝ փորձելով գտնել լավագույն լուծումները:
- Քննարկեք և հանրահայտ մարդկանց օրինակներով ցույց տվեք, որ գենդերային առանձնահատկությունները չեն կարող խոչընդոտ լինել հաջողության հասնելու ճանապարհին, և անկախ սեռից՝ մարդիկ ունեն հավասար իրավունքներ և հնարավորություններ:

12.Եթե ինչ-որ մեկն ինձ ասի, ես կասեմ

Թեմա	Գենդերային հավասարություն
Տարիք	10+
Տևողություն	20ր
Ակտիվության տեսակ	Քննարկում
Ընդհանուր ակնարկ	Քննարկման արդյունքում մասնակիցները սովորում են գենդերային հավասարությունը խաթարող կարծրատիպերի արձագանքման ուղիները:

Նպատակներ	• Հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
Նյութեր	• Պնդումների թերթիկ կամ թղթեր և գրիչներ

Նկարագիր

1. Ներկայացրեք սովորողներին որոշ պնդումներ և խնդրեք գրել, թե տվյալ պնդումը լսելու դեպքում ինչպես կարելի է պատասխանել:

1. Պնդում

Տղան ասում է. «Ես չեմ խաղում աղջիկների հետ»:

Պատասխան

_____

2. Պնդում

Պարի դասերը աղջիկների համար են, իսկ ֆուտբոլի դասերը՝ տղաների:

Պատասխան

_____

3. Պնդում

Տղաները կարող են դառնալ ոստիկան, իսկ աղջիկները չեն կարող:

Պատասխան

_____

4. Պնդում

Աղջիկները չպետք է խաղան լեգոներով:

Պատասխան

_____

2. Այնուհետև առաջարկեք սովորողներին բաժանվել երկու խմբի, որտեղ առաջին խումբը կառաջարկի գենդերային հավասարությանը խոչընդոտող պնդումներ, իսկ մյուս խումբը՝ դրանք չեզոքացնող պատասխաններ:

Խորհուրդներ վարողին

- Վարժության կատարման վերջում մասնակիցների հետ քննարկեք առօրյայում նմանօրինակ պնդումներին ճիշտ հակադրվելու եղանակները:
- Քննարկեք այն հարցը, թե ինչու են նմանօրինակ պնդումները սխալ, ինչու է հարկավոր խուսափել դրանցից:
- Թույլ տվեք ներկայացնել դեպքեր իրենց կյանքից, երբ կարողացել են հաղթահարել գենդերային անհավասարության տարբեր դրսևորումներ և հաջողության են հասել:

13.Մտածել «տուփից դուրս»

Թեմա	գենդերային հավասարություն
Տարիք	10+
Տևողություն	15ր
Ակտիվության տեսակ	Քննարկում
Ընդհանուր ակնարկ	Քննարկման ընթացքում մասնակիցները ներկայացնում են վարքային գենդերային կարծրատիպեր և քննարկում դրանց հաղթահարման ուղիները:
Նպատակներ	• Հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
Նյութեր	• Երկու տուփ, թերթիկներ և գրիչներ

Նկարագիր

1. Սովորողների առջև երկու տուփ դրեք: Տուփերից մեկի վրա գրեք՝ աղջիկներ, մյուսի վրա՝ տղաներ:

2. Այնուհետև առաջարկեք լրացնել նշված հարցերի պատասխանները և դնել դրանք համապատասխան տուփի մեջ:

- Կարծրատիպեր այն մասին, թե ինչպես պետք է իրենց պահեն աղջիկները:
- Կարծրատիպեր այն մասին, թե ինչպես պետք է իրենց պահեն տղաները:
- Կարծրատիպեր այն մասին, թե ինչ պետք է սիրեն/ չսիրեն տղաները:
- Կարծրատիպեր այն մասին, թե ինչ պետք է սիրեն/ չսիրեն աղջիկները:
- Կարծրատիպեր այն մասին, թե ինչ տեսք պետք է ունենան, ինչպես պետք է մտածեն և զգան աղջիկները:
- Կարծրատիպեր այն մասին, թե ինչ տեսք պետք է ունենան, ինչպես պետք է մտածեն և զգան տղաները:

3. Խնդրեք սովորողներին պատասխանները գրել առանձին թերթիկների վրա և գցել համապատասխան արկղի մեջ:

Խորհուրդներ վարողին

- Երբ բոլոր թերթիկները տուփերում են, ընթերցեք դրանք և քննարկեք «տուփից դուրս» մտածելակերպի կարևորության հարցը:
- Թույլ թվեք երեխաներին ներկայացնել կարծրատիպերի նմանօրինակ հաղթահարման իրենց տարբերակները:

Աղբյուր

Gender Equality Matters., https://www.pdst.ie/sites/default/files/Gender%20Equality%20Matters.pdf

Ծնողավարման հմտությունների զարգացմանն ուղղված վարժություններ



1.Անցյալի կարծրատիպերը

Թեմա	Գենդերային հավասարություն
Տևողություն	20ր
Ակտիվության տեսակ	Քննարկում
Ընդհանուր ակնարկ	Քննարկման ընթացքում ծնողներին հնարավորություն է տրվում վերահիմաստավորելու սեփական վարքը, գիտակցելու գենդերային կարծրատիպերի հաղթահարման նշանակությունը երեխաների դաստիարակության գործընթացում:
Նպատակներ	• Հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
Նյութեր	• Աղյուսակ «Նախկին և ներկա կարծրատիպեր»

Նկարագիր

1. Նախապես պատճենեք «Նախկին և ներկա կարծրատիպեր» աղյուսակը մասնակիցների քանակին համապատասխան:

2. Բաժանեք ծնողներին աղյուսակներով թղթերը և խնդրեք վերջիններիս լրացնել դրանք՝ գրառելով նախկինում և ներկայում իրենց հանդիպած գենդերային կարծրատիպերը:

3. Առաջադրանքն ավարտելուց հետո մասնակիցների հետ քննարկեք ներկայացված կարծրատիպերի հնարավոր ազդեցությունն ու հետևանքները:

4. Ամփոփեք վարժությունը՝ ծնողների հետ քննարկելով գենդերային կարծրատիպերի բացասական ազդեցությունը երեխաների դաստիարակության գործընթացում:

	Նախկին կարծրատիպեր	Ներկա կ արծրատիպեր
Աղջիկներ		
Տղաներ		

2.Հետևանք

Թեմա	Գենդերային հավասարություն
Տևողություն	10ր
Ակտիվության տեսակ	Քննարկում
Ընդհանուր ակնարկ	Քննարկման արդյունքում ծնողները փորձելու են պատկերացում կազմել գենդերային կարծրատիպերի հետևանքների վերաբերյալ:
Նպատակներ	• Հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
Նյութեր	• Կարծրատիպերի ցուցակի պատճեն

Նկարագիր

1. Ծնողներին ներկայացրեք ամենատարածված կարծրատիպերը, որոնք բնորոշ են մեր հասարակության լայն շերտերին:

2. Բաժանեք նրանց ձեր կողմից կազմված կարծրատիպերի աղյուսակը, խնդրեք ծանոթանալ դրանցից յուրաքանչյուրին և փորձել մոտավոր պատկերացում կազմել այն մասին, թե ինչ կլինի, եթե տվյալ գենդերային կարծրատիպերը ձևավորվեն իր երեխայի մոտ: Հրահանգեք նրանց գրի առնել այդ հետևանքները ստորև ներկայացված աղյուսակի համապատասխան բաժնում:

3. Խնդրեք մասնակիցներին բարձրաձայնել իրենց գրառումները և ամփոփել հետևանքները:

4. Ամփոփեք վարժությունը՝ քննարկելով գենդերային կարծրատիպերի հաղթահարման ուղիները:

Կարծրատիպ	Հետևանք
Եթե տղայիս ասեմ, որ տղաները հատակը չեն մաքրում	
Եթե աղջկաս ասեմ, որ աղջիկների համար կարևորը ոչ թե կրթությունն է, այլ լավ ընտանիք կազմելը	
Եթե աղջկաս ասեմ, որ ծրագրավորումը աղջկա մասնագիտություն չէ	
Եթե տղայիս ասեմ, որ տղաները լաց չեն լինում	
Եթե աղջկաս ասեմ, որ աղջիկները թույլ սեռ են և պետք է ենթարկվեն տղաներին	



3.Խանգարող կարծրատիպեր

Թեմա	Ժողովրդավարություն, խտրականություն, գենդերային հավասարություն
Տևողություն	20ր
Ակտիվության տեսակ	Քննարկում
Ընդհանուր ակնարկ	Քննարկման արդյունքում ծնողները փորձում են վերհանել խաղալիքների կիրառման հետ կապված կարծրատիպային մոտեցումները և հաղթահարել դրանք:
Նպատակներ	• Հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
Նյութեր	• Թղթեր, գրիչներ

Նկարագիր

1. Առաջարկեք ծնողներին լրացնել աղյուսակը այնպիսի գենդերային կարծրատիպերով, որոնք ձևավորվել են իրենց մոտ մանկուց և խանգարել են կյանքի տարբեր իրավիճակներում:

Կարծրատիպեր	Ինչո՞ւ են խանգարել

2. Այնուհետև խնդրեք մասնակիցներին խորհել այն մասին, թե ինչու են այդ կարծրատիպերը խանգարել իրենց:

3. Ամփոփեք վարժությունը՝ քննարկելով մասնակիցների հետ դրանց հաղթահարման հնարավոր ուղիները:

4.Գենդերային հավասարության անիվ

Թեմա	Խտրականություն, գենդերային հավասարություն
Տևողություն	15ր
Ակտիվության տեսակ	Քննարկում
Ընդհանուր ակնարկ	Գործնական աշխատանքի միջոցով վերհանվում է հասարակության մեջ անկախ սեռից մարդկանց հավասար իրավունքներ ունենալու հարցը:
Նպատակներ	• Հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
Նյութեր	• «Հավասարություն» գրառումով պաստառ

Նկարագիր

1. Առաջարկեք ծնողներին ստեղծել պաստառ, որի մեջտեղում պատկերված է հավասարության անիվը: Անվի բոլոր կողմերում անհրաժեշտ է գրառել բոլոր այն սկզբունքները, որոնք կապահովեն գենդերային հավասարությունը հասարակության շրջանում:

2. Նախապես պաստառի վրա գրեք մի քանի սկզբունք, հետո մասնակիցներին առաջարկել շարունակել և ավելացնել դրանք: Օրինակ՝

- կրթություն ստանալու հավասար իրավունքներ,
- ծնողավարման ընթացքում հավասար պատասխանատվության զգացում և այլն:

3. Վարժության վերջում մասնակիցների հետ քննարկեք, թե նշված սկզբունքներից որոնք են առավել դժվար պահպանվում հայ հասարակության շրջանում, ինչու և ինչ կարելի է անել դրանց պահպանման ուղղությամբ:

5.Խաղալիքներ

Թեմա	Խտրականություն, գենդերային հավասարություն
Տևողություն	10ր
Ակտիվության տեսակ	Քննարկում
Ընդհանուր ակնարկ	Քննարկման արդյունքում ծնողները փորձում են վերհանել խաղալիքների կիրառման հետ կապված կարծրատիպային մոտեցումները և հաղթահարել դրանք:
Նպատակներ	• Հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
Նյութեր	• Թուղթ, գրիչ

Նկարագիր

1. Ծնողներին ներկայացրեք աղյուսակում բերված խաղալիքները և խնդրեք լրացնել աղյուսակը՝ նշելով, թե յուրաքանչյուր խաղալիքով ով կարող է խաղալ՝ տղանե՞ր, աղջիկնե՞ր, թե՞ երկուսն էլ:

2. Առաջադրանքը կատարելուց հետո քննարկեք հակադիր տեսակետները՝ փորձելով ծնողների մոտ ձևավորել գենդերային հավասարության գիտակցման բարձր մակարդակ:

Խաղալիքների, իրերի ցանկ	Տղաներ	Աղջիկներ	Տղաներ և աղջիկներ
Գնդակ			
Տիկնիկ			
Լեգո			
Հեծանիվ			
Մեքենաներ, գնացքներ			
Սպասք			
Զարդեր, ինքնախնամքի միջոցներ			
Կենցաղային իրեր՝ արդուկ, լվացքի մեքենա			

Հավելված 1 | Պարզ պնդումներ

1. Տիկնիկները միայն աղջիկների համար են:
2. Տղաները չեն լացում:
3. Տղաները վարդագույն հագուստ չեն կրում:
4. Աղջիկը չի կարող խմբի ղեկավար լինել:
5. Ֆուտբոլ խաղում են միայն տղաները:
6. Աղջիկները թույլ են, իսկ տղաները՝ ուժեղ:
7. Աղջիկները օգնում են իրենց մայրերին. տղաներն օգնում են իրենց հայրերին:
8. Ավելի լավ է աղջիկ լինել, քան տղա:
9. Երբ ինչ-որ բան այն չէ, առաջին հերթին տղաներին են մեղադրում:
10. Տղաները կարող են «կեղտոտ խոսքեր» ասել, իսկ աղջիկները՝ ոչ:
11. Աղջիկներն ավելի խելացի են, քան տղաները:
12. Աղջիկները հաղթում են կռիվներում, քանի որ նրանք ազնիվ չեն խաղում:
13. Նորմալ է, որ տղաները հարվածեն միմյանց, իսկ աղջիկները՝ ոչ:
14. Տղաներն ավելի ծույլ են, քան աղջիկները:
15. Աղջիկները ավելի հմտորեն են ստում, քան տղաները:

Հավելված 2 | Շրջված հեքիաթ

Մոխրոտը

Ժուկով-ժամանակով մի տանը ապրում էր մի խեղճ երիտասարդ տղա: Նրա հայրը մահացել էր, իսկ մայրը տուն էր բերել մեկ այլ տղամարդու՝ երկու որդի ունեցող այրու: Տղայի նոր խորթ հայրը այնքան էլ դուր չեկավ նրան: Բոլոր լավ իրերը, բարի խոսքերն ու առանձնահատուկ արտոնությունները միայն նրա հարազատ որդիների համար էին: Նրանք ստանում էին նորաձև հագուստ, համեղ ուտեստներ և հատուկ հյուրասիրություններ, բայց խեղճ տղայի համար ընդհանրապես ոչինչ չկար. ոչ մի գեղեցիկ հագուստ, այլ միայն խորթ եղբայրների լաթերը, ոչ մի հատուկ ուտեստ, այլ միայն ուտելիքի մնացորդներ, ոչ մի արտոնություն կամ նույնիսկ հանգստություն, քանի որ նա ստիպված էր ամբողջ օրը քրտնաջան աշխատել՝ մթերք գնել, ճաշ պատրաստել, հագուստ լվանալ և ամբողջ տունը մաքուր պահել: Միայն երեկոյան նրան թույլ էին տալիս մի քիչ մենակ նստել խոհանոցի կրակի մոխիրների մոտ:

Մի օր էլ տանը սկսեցին հայտնվել գեղեցիկ նոր հագուստներ, կոշիկներ և զարդեր: Թագուհին պարահանդես էր կազմակերպել, և խորթ եղբայրները պատրաստվում էին մասնակցել: Նրանք անընդհատ կանգնած էին հայելու առաջ: Տղան պետք է օգներ նրանց հագնվել ողջ շքեղությամբ: Նա չէր համարձակվում հարցնել. «Իսկ ես չեմ գնալու պարահանդես», քանի որ շատ լավ գիտեր, թե ինչ է լինելու պատասխանը. «Իմ սիրելի տղա, դու մնում ես տանը, որպեսզի լվանաս ամանները, մաքրես հատակը և հավաքես խորթ եղբայրներիդ մահճակալները: Քո եղբայրները տուն կգան հոգնած»:

Երբ խորթ հայրն ու եղբայրները գնացին պարահանդես, խեղճ տղան մաքրեց արցունքները և հոգոց հանեց. «Օ՜, ես այնքան դժբախտ եմ»: Հենց այդ ժամանակ հանկարծ խոհանոցը լցվեց ճառագող լույսով, և հայտնվեց մի փերի:

«Մի՛ տխրիր, երիտասա՛րդ, - ասաց փերին, - քամին ինձ մոտ հասցրեց քո հոգոցները: Ես գիտեմ, որ դու փափագում ես գնալ պարահանդես: Եվ դու այդպես էլ կանես»:

«Ինչպե՞ս կարող եմ այս լաթերի մեջ պարահանդես գնալ,- ասաց խեղճ տղան,- ծառաներն ինձ կհեռացնեն»: Փերին ժպտաց: Իր կախարդական փայտիկի մի շարժումով տղան հայտնվեց ամենագեղեցիկ հագուստների մեջ, որոնք երբևէ տեսել էր թագավորությունը: «Հիմա, երբ մենք լուծել ենք հագուստի հարցը,- ասաց փերին,- մենք պետք է քեզ համար կառք վերցնենք: Իսկական ջենթլմենը երբեք ոտքով չի գնա պարահանդես: Արա՛գ, ինձ մի դդո՛ւմ բեր», - հրամայեց նա: «Օ՜, իհարկե», - ասաց խեղճ տղան, շտապ հեռանալով: Փերին շրջվեց դեպի կատուն. «Իսկ դու ինձ յոթ մուկ բեր»:

Խեղճ տղան շուտով վերադարձավ մի փոքրիկ դդումով, իսկ կատուն՝ յոթ մկներով, որոնք նա բռնել էր նկուղում: «Լա՛վ» — բացականչեց փերին: Կախարդական փայտիկի մի շարժում, և՝ օ՛, հրաշքների հրաշք. դդումը վերածվեց շողշողացող կառապանի, վեց մկները դարձան վեց սպիտակ ձիեր, իսկ մի մկնիկը վերածվեց գեղեցիկ զգեստով կառապանուհու: Խեղճ տղան հազիվ էր հավատում իր աչքերին: «Շուտով կտեսնես, որ արքայադուստրը, ում պատվին անցկացվում է պարահանդեսը, կհմայվի քո գեղեցիկ արտաքինով: Բայց հիշի՛ր. հենց խփեց կեսգիշերը, դու պետք է թողնես պարահանդեսը և վերադառնաս տուն: Որովհետև դա այն ժամանակն է, երբ կախարդանքն ավարտվում է: Դու դարձյալ կհայտնվես քո մոխրոտ զգեստների մեջ, քո կառքը դդմի կվերածվի, ձիերն ու կառապանուհին էլ նորից մուկ կդառնան: Եվ այս հոյակապ կոշիկների փոխարեն դու նորից կհագնես լաթի կտորներ: Հասկանու՞մ ես»: Տղան ժպտաց և ասաց. «Այո՛, ես հասկանում եմ»:

Երբ տղան մտավ պալատի դահլիճ, լռություն իջավ: Բոլորը կանգ առան՝ հիանալու նրա նրբագեղությամբ, գեղեցկությամբ և շնորհքով: «Ո՞վ կարող է դա լինել», - հարցնում էին մարդիկ միմյանց: Երկու խորթ եղբայրները նույնպես մտածում էին, թե ով է նորեկը. նրանք երբեք չէին կռահի, որ գեղեցիկ տղան իրականում իրենց խորթ եղբայրն է: Արքայադուստրը հիացավ նրա գեղեցկությամբ: Նա քայլեց դեպի տղան և խնդրեց նրան պարել իր հետ: Եվ ի մեծ հիասթափություն բոլոր երիտասարդ պարոնների, նա ամբողջ երեկո պարեց տղայի հետ: «Ո՞վ ես դու, գեղեցիկ երիտասարդ», - հարցրեց արքայադուստրը տղային, բայց նա միայն պատասխանեց. «Ինչ կապ ունի, թե ով եմ ես: Դուք, այնուամենայնիվ, ինձ այլևս չեք տեսնի»: «Օ՜, բայց ես դա կանեմ, ես միանգամայն վստահ եմ», - ասաց արքայադուստրը:

Խեղճ տղան հիանալի ժամանակ անցկացրեց պարահանդեսի ժամանակ, բայց հանկարծ լսեց ժամացույցի ձայնը. կեսգիշերի առաջին հարվածը: Նա հիշեց փերու ասածը և առանց հրաժեշտի խոսքի դուրս պրծավ արքայադստեր գրկից ու ցած վազեց աստիճաններով: Երբ նա վազում էր, սայթաքեց, կոշիկներից մեկը դուրս եկավ ու ընկավ աստիճանների վրա, բայց տղան կանգ չառնավ այն վերցնելու համար: Եթե հնչեր կեսգիշերն ազդարարող վերջին հարվածը... ախ, ինչ աղետ կլիներ դա:

Նա դուրս փախավ և անհետացավ գիշերվա խավարում: Արքայադուստրը, ով այժմ խելագարի պես սիրահարված էր նրան, վերցրեց կոշիկը և հայտարարեց, որ կամուսնանա այն տղայի հետ, ում ոտքին հարմար կլինի այդ կոշիկը: Նա ասաց իր նախարարներին. «Գնացեք և ամենուր փնտրեք այն տղային, ում համապատասխանում է այս կոշիկը: Ես չեմ հանգստանա, մինչև չգտնեմ նրան»: Այսպիսով, նախարարները կոշիկը փորձեցին բոլոր տղաների ոտքերին:

Եվ մի օր էլ նախարարներից մեկը եկավ այն կալվածք, որտեղ ապրում էր տղան խորթ հոր և խորթ եղբայրների հետ: Նախարարը հարցրեց՝ կարո՞ղ է կոշիկը փորձել տան երիտասարդների ոտքերին: Երկու խորթ եղբայրները չկարողացան կոշիկի մեջ

նույնիսկ ոտքի մատները մտցնել: Երբ նախարարը հարցրեց, թե տանը այլ երիտասարդներ կան, խորթ հայրը նրան պատասխանեց՝ «Ո՛չ»: Սակայն հենց այդ ժամանակ նրա ուշադրությունը գրավեց կատուն, որը քաշում էր նրա տաբատի ոտքից՝ տանելով նրան դեպի խոհանոց: Խեղճ տղան նստած էր մոխիրների մոտ: Նախարարը օգնեց նրան հագնել կոշիկը և, ի զարմանս իրեն, այն հիանալի նստում էր տղայի ոտքին: «Այդ սարսափելի անխնամ տղան պարզապես չէր կարող լինել պարահանդեսում»,- բղավեց խորթ հայրը: «Ասա արքայադստերը, որ նա պետք է ամուսնանա իմ երկու որդիներից մեկի հետ: Չե՞ք տեսնում, թե որքան տգեղ է այդ տղան»:

Հանկարծ հայտնվեց փերին: «Բավական է», - բացականչեց նա՝ բարձրացնելով կախարդական փայտիկը: Մի ակնթարթում տղան հայտնվեց գեղեցիկ հանդերձանքով՝ փայլելով երիտասարդությամբ ու գեղեցիկ արտաքինով: Խորթ հայրն ու խորթ եղբայրները զարմանքից պապանձվել էին: Նախարարն ասաց. «Արի մեզ հետ, գեղեցիկ երիտասարդ: Արքայադուստրը սպասում է քեզ՝ ներկայացնելու իր նշանադրության մատանին»: Եվ տղան ուրախությամբ գնաց նրանց հետ:

Արքայադուստրը մի քանի օր անց ամուսնացավ տղայի հետ, և նրանք ապրեցին երջանիկ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գենդերային արձագանքման հարցերի շուրջ Հայաստանի միջին և ավագ դպրոցների ուսուցիչների պատկերացումները, ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ) Երևան, 2021 թվական:
2. Գենդերարձագանքող ուսուցման գործելակերպեր. ֆոկուսխմբային քննարկումների հիմնական արդյունքները, ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ) Երևան, 2021 թվական:
3. «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա», Միավորված ազգերի կազմակերպություն, 1989:
4. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60503
5. Adapted from the activity “What I Like and What I Do” Compasito - Manual on human rights education for children, 2nd edition, 2009, p.185-186.
6. Adapted from the activity Gender-bender, ABC Teaching Human Rights, Practical activities for primary and secondary schools, United Nations, OHCHR, New York, Geneva, 2004, and Myra Sadker Advocates: www.sadker.org.
7. Compasito - Manual on human rights education for children, 2nd edition, 2009, p.82.
8. Compassito_EN.indd, p245.
9. Gender Equity for Educators, Parents, and Community. Equity in Education Series.,files.eric.ed.gov/fulltext/ED400216.pdf.
10. Gender Equality Matters.
11. https://www.pdst.ie/sites/default/files/Gender%20Equality%20Matters.pdf
12. https://www.wikihow.life/Promote-Gender-Equality-in-the-Classroom
13. ICRW, 2011. GEMS Training Manual for facilitators. New Delhi: ICRW.
14. Ochman, J.M. (1996), ‘The effects of nongender-role stereotyped, same-sex role models in storybooks on the selfesteem of children in grade three’, Sex Roles, Vol. 35:11-12, pp711-735
15. What Do We Mean by “Sex” and “Gender”? World Health Organisation: www.who.int/gender/whatisgender/en

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **3**
ՁԵՌՆԱՐԿԻ ՄԱՍԻՆ **5**
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԱՍ **8**
• Ի՞նչ է գենդերային հավասարությունը 9
• Ի՞նչ է գենդերազգայուն մանկավարժությունը 11
• Գենդերային խտրականություն կամ գենդերով պայմանավորված կարծրատիպեր 14
• Ինչպե՞ս հաղթահարել գենդերային կարծրատիպերը երեխաների և դեռահասների շրջանում 17
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ **18**
•Սովորողների գենդերային կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված վարժություններ 23
•Ծնողավարման հմտությունների զարգացմանն ուղղված վարժություններ 58
ՀԱՎԵԼՎԱԾ **67**
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ **71**



Դանանի

սոցիալ-հոգեբանական կենտրոն ՀԿ

ISBN 978-9939-978-06-2

9 789939 978062